

«Կոնվերս բանկ» ՓԲԸ ղեկավարության հայտարարությունը

Մենք պատասխանատու ենք բանկի ֆինանսական վիճակը արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման համար: Այսպիսով բանկի ղեկավարությունը պատասխանատու է՝

- հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, խորհրդի կողմից հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար,
- հիմնավորված գնահատումներ և հաշվարկներ կատարելու համար,
- Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջների պահպանման, իսկ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից շեղումների դեպքում՝ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում այդ շեղումների բացահայտման համար,
- հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար,
- ֆինանսական հաշվետվությունները բանկի գործունեության անընդհատության հիման վրա պատրաստելու համար,

Բանկում գործում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին համապատասխանող արդյունավետ և հուսալի ներքին հսկողության համակարգ,

Բանկում գործում է բանկի ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվություն ապահովող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխանող հաշվապահական հաշվառման գործուն համակարգ,

Բանկում ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ:



Գործադիր տնօրեն **Տիգրան Դավթյան**

Գլխավոր հաշվապահ **Գոհար Հարությունյան**

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ

31.12.2014 ԴՐՈՒԹՅԱՄԲ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՄԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծանոթագրություն 1. «Իրավական դաշտ և կորպորատիվ կառավարում»

Հիմնական գործունեություն

«Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերությունը («Բանկը») Խմբի Մայր կազմակերպությունն է: Խումբը բաղկացած է Բանկից և «Կոնվերս Ինկասսացիա» ՍՊԸ կազմակերպությունից («Խումբ»):

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն հիմնվել է Հայաստանի Հանրապետությունում որպես փակ բաժնետիրական ընկերություն: Բանկը գրանցվել է 1994թ-ի նոյեմբերի 28-ին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N57 արտոնագրային համարով: Բանկը գործում է ՀՀ օրենսդրության, ՀՀ ԿԲ և այլ գերատեսչական կառույցների նորմատիվ ակտերի, իր կանոնադրության և ներքին ակտերի համաձայն: Բանկը տրամադրում է ֆինանսական և բանկային ծառայությունների լայն ընտրանի և գործում է մայրաքաղաքում տեղակայված գլխավոր գրասենյակի , ՀՀ տարածքում գտնվող 32 մասնաճյուղերի և ԼՂՀ տարածքում գտնվող 1 մասնաճյուղի միջոցով:

«Կոնվերս բանկ» ՓԲԸ գլխավոր գրասենյակի և մասնաճյուղերի հասցեներն են.

Գլխավոր գրասենյակ	ՀՀ 0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Վ. Սարգսյան 26/1 ,Հեռ.՝ 511211, 511200
«Կենտրոնական» մասնաճյուղ	ՀՀ 0051, ք. Երևան, Կոմիտասի 49 Հեռ.՝ 281015, 230996
«Ավան» մասնաճյուղ	ՀՀ 0060, ք. Երևան, Ավան, Խուլդյակով 161/2 Հեռ.՝ 614472, 614423
«Արարատյան» մասնաճյուղ	ՀՀ 0006, ք. Երևան, Բագրատունյաց 13 շենք, 111 Հեռ.՝ 465006,465007
«Զվարթնոց օդանավակայան» մասնաճյուղ	ՀՀ ք. Երևան, Զվարթնոց 42 Հեռ.՝ 493197
«Ավիացիա» մասնաճյուղ	ՀՀ ք. Երևան, Զվարթնոց 42 Հեռ.՝ 520706
«Նոր Հաճրն» մասնաճյուղ	ՀՀ 2412, ք. Նոր Հաճրն, Չարենցի 8 Հեռ.՝(02240) 43840, 43830
«Վանաձոր» մասնաճյուղ	ՀՀ 2021, ք. Վանաձոր, Խորենացու 1գ Հեռ.՝ (0322) 42910, 41258
«Գյումրի» մասնաճյուղ	ՀՀ 3106, ք. Գյումրի, Գ.Նժդեհ 4բ Հեռ.՝ (0312) 42095, 41794
«Արտաշատ» մասնաճյուղ	ՀՀ 0701, ք. Արտաշատ, Օգոստոսի 23 փող., թիվ 117ա, Հեռ.՝ (0235) 22499, 22478
«Արմավիր» մասնաճյուղ	ՀՀ 0901, ք. Արմավիր, Շահումյան 46 Հեռ.՝ (374 237) 62273, 60742, (374 10) 281433
«Մեծամոր» մասնաճյուղ	ՀՀ 0910, ք. Մեծամոր, Քաղաքապետարանի շենք,1-ին հարկ , Հեռ.՝ (0237) 32070, 281833

«Չարենցավան» մասնաճյուղ	ՀՀ 2501, ք. Չարենցավան, Խանջյան 21 Հեռ.՝ (0226) 41597
«Հրազդան» մասնաճյուղ	ՀՀ 2302, ք. Հրազդան, Միկրոշրջան 104, 1-ին հարկ Հեռ.՝ (0223) 34709
«Սևան» մասնաճյուղ	ՀՀ 1501, ք. Սևան, Նաիրյան 153 Հեռ.՝ (0261) 25452
«Լոռի» մասնաճյուղ	ՀՀ 2021, ք. Վանաձոր, Գ. Լուսավորչի 54 Հեռ.՝ (0322) 42118, 42912
«Շիրակ» մասնաճյուղ	ՀՀ ք. Գյումրի, Շիրակ օդանավակայան Հեռ.՝ (0312) 37238, 42095
«Էջմիածին» մասնաճյուղ	ՀՀ ք. Էջմիածին, Մաշտոցի 69/90 Հեռ.՝ (0231) 40005, 40009
«Աբովյան» մասնաճյուղ	ՀՀ ք. Աբովյան, Սահմանադրության հրապարակ Հեռ.՝ (0222) 33080
«Նոր Նորք» մասնաճյուղ	ՀՀ 0056, ք. Երևան, Գայի պող. 12/10 Հեռ.՝ 644660
«Իջևան» մասնաճյուղ	ՀՀ 4001, ք. Իջևան, Վալանսի փող. 6/1 Հեռ.՝ (0263) 40844, 40899
«Կումայրի» մասնաճյուղ	ՀՀ ք. Գյումրի, Խրիմյան Հայրիկ 46ա Հեռ.՝ (0312) 35695, 35615
«Մոսկովյան» մասնաճյուղ	ՀՀ ք. Երևան, Մաշտոց 39/12 Հեռ.՝ 521526
«Սայաթ-Նովա» մասնաճյուղ	ՀՀ 0001, ք. Երևան, Սայաթ – Նովա պող. 19 Հեռ.՝ (374 10) 546049, 546053, 546056, 546057
«Կիլիկիա» մասնաճյուղ	ՀՀ 0082, ք. Երևան, Զաջագունի 4/1 Հեռ.՝ (374 10) 551359
«Փստրանկ 19» մասնաճյուղ	ՀՀ , ք. Երևան, Բաղրամյան 23 Հեռ.՝ (37410) 514619
«Կապան» մասնաճյուղ	ՀՀ , ք. Կապան, Թումանյան 1/2 Հեռ.՝ (374 285) 20058
«Ստեփանակերտ» մասնաճյուղ	ԼՂՀ , ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25/2 Հեռ.՝ (374 47) 975277
«Ավան-1» մասնաճյուղ	ՀՀ, Կոտայք, Երևան-Սևան մայրուղու աջակողմյան հատված «Գլոբալ Մոթորս» ՓԲԸ ավտոսրահում
«Էրեբունի » մասնաճյուղ	ՀՀ , ք. Երևան, Էրեբունի 11 Հեռ.՝ (374 10) 430457

«Ձեյթուն» մասնաճյուղ	ՀՀ, ք. Երևան, Քանաքեռ-Ձեյթուն համայնք, Ռուբինյանց 14/7 Հեռ.՝ (374 10) 614472
«Դավիթաշեն» մասնաճյուղ	ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն, 3-րդ թաղամաս, 18/6 տարածք Հեռ.՝ (374 10) 511211
«Աշտարակ» մասնաճյուղ	ՀՀ, ք. Աշտարակ, Սիսակյան փողոց 1, 1 փոստատան տարածք Հեռ.՝ (374 232) 36911, (374 232) 36922
«Դիլիջան» մասնաճյուղ	ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան փողոց 1, կապի հանգույցի 1-ին հարկ Հեռ.՝ (374 0268) 22386

Բանկի դուստր ընկերություն

«Կոնվերս Ինկասագիա» ՍՊԸ-ն ստեղծվել է 2000թ.ին և գործում է ՀՀ Կառավարության առընթեր ՀՀ Ոստիկանության տրված ԻԾՄ N 52 լիցենզիայի համաձայն:

«Կոնվերս Ինկասագիա» ՍՊԸ-ի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի 49:

Հայաստանի գործարար միջավայրը

Տնտեսական զարգացման ներկա փուլում Հայաստանի Հանրապետության քաղաքական և տնտեսական միջավայրերին բնորոշ է որոշակի անկայունություն, ինչը կարող է ազդեցություն ունենալ այստեղ գործող ձեռնարկությունների գործունեության վրա: Հետևաբար, Հայաստանի գործարար միջավայրում ծավալած գործունեությունը կապված է ռիսկերի հետ, որոնք բնորոշ չեն այլ շուկաներին: Ներկայացված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Խմբի ֆինանսական վիճակի և գործառնությունների վրա ներկա տնտեսական իրավիճակի հնարավոր ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

Կորպորատիվ կառավարում**1. Խորհրդի կառուցվածքը, կազմը.**

Խորհրդի նախագահ՝	Արմեն Տեր-Տաճատյան,
Խորհրդի անդամներ՝	Ջուան Պաբլո Գեչիդջյան,
	Արսեն Գամաղեյան,
	Մաթիաս Գեյնգա Էռնեսկյան,
	Խոսե Լուիս Պերսիկո,
	Դանիել Գիլերմո Սիմոնուտի,
	Խորխե Ալբերտո Դել Ագիլա

2. Վարչության կառուցվածքն ու կազմը.

Վարչության նախագահ՝	Տիգրան Դավթյան
Վարչության անդամ՝	Գոհար Հարությունյան,
	Վելիխան Մուրադյան,
	Վահե Դալյան,
	Միսակ Դավթյան,

Արման Ասատրյան,
Սերգեյ Շևչենկո,
Բաֆֆի Սիիրան Քասարջյան

3. Բաժնետերեր.

«ԸԴՎԱՆՍԴ ԳԼՈՒԲԱԼ ԻՆՎԵՍՏՄԵՆԹՍ» ԷԼԷԼՍԻ – 95%,
Հայաստանյազ Առաքելական Սուրբ Եկեղեցի ի դեմս՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի – 5%:

4. Խմբի ղեկավարության վարձատրությունը կատարվում է համաձայն կնքված աշխատանքային պայմանագրերի և Խմբի կողմից հաստատված հաստիքացուցակի:

Ծանոթագրություն 2. «Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը»

Պատրաստման հիմունքներ

Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») պահանջների համաձայն:

Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված կամ պատմական արժեքով, բացառությամբ հողի և շինությունների, որոնք ներկայացվել են վերագնահատված արժեքով:

Չափման և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է: Որպես չափման արժույթ ղեկավարությունը սահմանել է դրամը, քանի որ վերջինս արտացոլում է Խմբի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը: Դրամը հանդիսանում է նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացվում է հազար դրամներով:

Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջների համաձայն պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաև պայմանական պարտավորությունների ու ակտիվների բացահայտմանը վերաբերող մի շարք գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

Ֆինանսական հաշվետվությունների համախմբում

Դուստր կազմակերպությունները, որոնց նկատմամբ Խումբը կարող է տնօրինել ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի կեսից ավելին կամ այլ կերպ վերահսկում է այդ ընկերության գործունեությունը, համախմբվում են: Դուստր կազմակերպությունների հաշվետվությունները համախմբվում են, երբ վերահսկումը փոխանցվում է Խմբին և բացառվում են համախմբումից, երբ դադարում է վերահսկելու հնարավորությունը:

Բոլոր ներխմբային գործառնությունները, հաշվարկների մնացորդները կամ չիրացված հասույթը բացառվում են: Բացառվում է նաև չիրացված վնասը, մինչև ձեռք չի բերվում համոզվածություն փոխանցված ակտիվի արժեզրկման վերաբերյալ: Անհրաժեշտության դեպքում, դուստր կազմակերպությունների հաշվապահական հաշվառման քաղաքականությունը փոփոխվել է Խմբի կողմից ընդունված քաղաքականությանը համապատասխանեցնելու նպատակով: Բոլոր դուստր կազմակերպությունների հաշվետու ամսաթիվը դեկտեմբերի 31-ն է:

Ձեռք բերման ժամանակ, Դուստր կազմակերպության ակտիվները, պարտավորություններն ու պայմանական պարտավորությունները չափվում են ձեռք բերման օրվա դրությամբ իրական արժեքով: Ձեռք բերման արժեքի և ձեռք բերված գուտ ակտիվների դրական տարբերությունը հաշվառվում է որպես գուղվիլ: Եթե ձեռք բերման արժեքը փոքր է ձեռք բերված դուստր կազմակերպության գուտ ակտիվների իրական արժեքից, ապա տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների վերաբերյալ հաշվետվությունում ձեռք բերման ժամանակաշրջանում: Չվերահսկվող մասնակցությունը հաշվառվում է ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի համապատասխան չափով: Հետագայում, չվերահսկվող մասնակցությանը գերազանցող ցանկացած վնաս վերագրվում է Մայր Կազմակերպության բաժնեմասին: Մայր Ընկերության բաժնետերերին հասանելիք բաժնետիրական կապիտալը և չվերահսկվող մասնակցության հասանելիք գուտ եկամուտը արտացոլվում են առանձին տողերով հաշվեկշռում և ֆինանսական արդյունքների վերաբերյալ հաշվետվությունում:

Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Խումբ և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Խմբից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել:

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային եկամուտը և ծախսը ներառում են զեղչի, հավելավճարի կամ տոկոսակիր գործիքի սկզբնական հաշվեկշռային արժեքի և մարման ենթակա գումարի միջև տարբերությունների ամորտիզացիան, որը հաշվարկվում է արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա:

Ֆինանսական արդյունքներով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների գծով կուտակված զեղչատոկոսը և հավելավճարը ճանաչվում են ֆինանսական արդյունքներում որպես ֆինանսական արդյունքներով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների գուտ օգուտ / (վնաս):

Վարկի տրամադրման, սպասարկման և այլ վճարները, որոնք վարկի ընդհանուր եկամտաբերության քաղկացուցիչ մաս են կազմում, այլ ուղղակի ծախսումների հետ միասին հետաձգվում են և

ամորտիզացվում տոկոսային եկամտին ֆինանսական գործիքի գնահատված ժամկետի ընթացքում կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Այլ միջնորդավճարները և այլ եկամտի և ծախսի հոդվածները ճանաչվում են, երբ համապատասխան ծառայությունը մատուցվում է:

Շահաբաժիններից եկամուտ ճանաչվում է ֆինանսական արդյունքներում շահաբաժնի հայտարարման օրը:

Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են դրամի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են դրամի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Սկզբնական արժեքով ներկայացված, արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են չափման արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Փոխարկման հետևանքով առաջացած արտարժութային տարբերությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

31.12.14 դրությամբ սահմանված փոխարժեքը կազմել է 474.97 դրամ = 1 ԱՄՆ դոլարի դիմաց (2013թ դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 405.64 դրամ = 1 ԱՄՆ դոլար):

Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված տարրերին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի նկատմամբ վճարման ենթակա ակնկալվող գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք հաշվետու ամսաթվի դրությամբ ուժի մեջ եղել կամ ըստ էության ուժի մեջ էին և նախորդ տարիներին վճարված հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Խմբի կողմից դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում կանխիկ դրամական միջոցները, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցները (բացառությամբ ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների համար դեպոզիտացված գումարների) և թղթակից բանկերում տեղաբաշխված հաշիվները, որոնք կարող են փոխարկվել կանխիկի կարճ ժամանակամիջոցում և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի:

Թանկարժեք մետաղներ

Ոսկին և այլ թանկարժեք մետաղները հաշվառվում են ՀՀ ԿԲ կողմից սահմանվող գներով, ինչը մոտավորապես դրանց իրական արժեքն է և հիմնված է Լոնդոնի Թանկարժեք Մետաղների Բորսայի գնանշումների վրա:

Գների տատանումներն արտացոլվում են թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ եկամուտ հոդվածում՝ զուտ եկամուտ առևտրային գործառնություններում:

Ֆինանսական գործիքներ

Դասակարգում

Խմբի կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների. ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, վարկեր և դեբիտորական պարտքեր, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ: Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռքբերման պահին՝ Խմբի ղեկավարության կողմից սահմանված գնահատումների հիման վրա հաշվի առնելով ձեռքբերման նպատակները:

Ֆինանսական արդյունքներով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներն և պարտավորությունները նրանք են, որոնք՝

- հիմնականում ձեռք են բերվել կամ առաջացել են մոտ ապագայում օտարելու կամ հետ գնելու նպատակով,
- առանձին ֆինանսական գործիքների պորտֆելի մի մասն են, որոնք կառավարվում են միասին և որոնց դեպքում առկա են նախկինում կարճաժամկետ շահույթի ստացման իրական դեպքեր,
- ածանցյալ ֆինանսական գործիքներ (բացառությամբ սահմանված ածանցյալ ֆինանսական գործիքների և հեջավորման արդյունավետ գործիքների), կամ
- սկզբնական ճանաչման ժամանակ Խմբի կողմից ճանաչվել են որպես ֆինանսական արդյունքներով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող:

Վերջիններին վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Խումբը ֆինանսական ակտիվները և պարտավորությունները դիտարկում է որպես ֆինանսական արդյունքներով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող այն դեպքում, եթե՝

- ակտիվները կամ պարտավորությունները կառավարվում և գնահատվում են իրական արժեքի հիմունքով,
- սահմանումը բացառում կամ էականորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունները, որոնք կառաջանային այլ հանգամանքներում, կամ
- ակտիվը կամ պարտավորությունը պարունակում է ներառված ածանցյալ, որն էականորեն ձևափոխում է այն դրամական հոսքերը, որոնք պայմանագրով հակառակ դեպքում կառաջանային:

Պոտենցիալ բարենպաստ պայմաններ ենթադրող (դրական իրական արժեք) առևտրային ածանցյալ գործիքները, ինչպես նաև ձեռք բերված օպցիոնները, ներկայացվում են որպես ակտիվ: Պոտենցիալ ոչ բարենպաստ պայմաններ ենթադրող (բացասական իրական արժեք) առևտրային ածանցյալ գործիքները, ինչպես նաև տրամադրված օպցիոնները, ներկայացվում են որպես պարտավորություն:

Ֆինանսական արդյունքներով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչումից հետո չեն վերադասակարգվում:

Տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք չունեն գնանշված շուկայական գին գործող շուկայում, բացառությամբ այն գործիքների՝

- որոնց Խումբը մտադիր է անմիջապես կամ կարճ ժամկետում վաճառել,
- որոնց Խումբը սկզբնական ճանաչման պահին սահմանում է որպես ֆինանսական արդյունքներով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող,
- որոնց Խումբը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնց գծով Խումբը չի փոխհատուցի իր սկզբնական ամբողջ ներդրումը վարկի վատթարացումից տարբեր պատճառներով:

Վաճառքի համար մատչելի ներդրումները պարտքային, ինչպես նաև կապիտալի գործիքներում կատարված այն ներդրումներն են, որոնք Խումբը մտադիր է պահել անորոշ ժամկետով, և որոնք կարող են վաճառվել իրացվելիության կարիքների բավարարման համար, ինչպես նաև տոկոսադրույքներում, փոխարժեքներում կամ բաժնետոմսերի գներում փոփոխությունների դեպքում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները նախնական ճանաչումից հետո հաշվառվում են իրական արժեքով: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններից առաջացած շահույթն ու վնասը վերագրվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներին մինչև ֆինանսական ակտիվի օտարումը կամ արժեզրկումը, որի դեպքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված շահույթը կամ վնասը վերաձևակերպվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ճանաչում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Խումբը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Չափում

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով (որը սովորաբար սկզբնական արժեքն է) գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն գործարքների հետ կապված ծախսումները, որոնք դասակարգվել են ֆինանսական արդյունքներով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքներ:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները, ներառյալ ակտիվ համարվող ածանցյալ գործիքները, չափվում են իրական արժեքով՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները, որոնք կարող են առաջանալ վաճառքի կամ այլ կերպ օտարման հետ կապված, բացառությամբ՝

- տրամադրված վարկերի ու դեբիտորական պարտքերի, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և
- սեփական կապիտալի գործիքներում ներդրումների, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին, որոնց իրական արժեքները հնարավոր չէ արժանահավատորեն չափել և որոնք չափվում են սկզբնական արժեքով:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական պարտավորությունների չափվում են ամորտիզացված արժեքով, բացառությամբ այն ֆինանսական պարտավորությունների, որոնք նախատեսված են որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, և այն ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվի փոխանցումը չի բավարարում ապաճանաչման չափանիշներին:

Ամորտիզացված արժեք

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ամորտիզացված արժեքն իրենից ներկայացնում է այն գումարը, որով ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած սկզբնապես ճանաչված գումարի և մարման պահին գումարի տարբերության կուտակված ամորտիզացիան, որը հաշվարկվել է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստը: Հավելավճարները և գեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ընդգրկված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Իրական արժեքի չափման սկզբունքներ

Իրական արժեքը այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ, շուկայի մասանկիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց :

Ֆինանսական գործիքների իրական արժեքը հիմնված է հաշվետու ամսաթվի դրությամբ գնանշված շուկայական գնի վրա՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները: Եթե գնանշված շուկայական գինը առկա չէ, գործիքի իրական արժեքը որոշվում է գնորոշման մոդելների կամ գեղչված դրամական հոսքերի տեխնիկայի միջոցով:

Ձեղջված դրամական միջոցների հոսքերի տեխնիկայի օգտագործման դեպքում դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը հիմնվում են դեկավարության լավագույն գնահատականների վրա, իսկ գեղչման դրույքը նմանատիպ պայմաններով գործիքի համար կիրառվող շուկայական համապատասխան տոկոսադրույքն է հաշվետու ամսաթվի դրությամբ: Գնորոշման մոդելների կիրառման դեպքում, մոդելում օգտագործվում են հաշվետու ամսաթվի դրությամբ շուկայական տվյալները:

Բորսաներում չըջանառվող ածանցյալ գործիքների իրական արժեքը գնահատվում է այն գումարի չափով, որը Խումբը կստանա կամ կվճարի հաշվետու ամսաթվի դրությամբ պայմանագրի գործողությունը դադարեցնելու դեպքում՝ հաշվի առնելով շուկայի ներկա պայմանները և ներկա պահին պայմանագրային կողմերի վճարունակությունը:

Հետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է հետևյալ կերպ.

- ֆինանսական արդյունքներով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքից առաջացող օգուտը կամ վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է այլ համապարփակ եկամտում (բացառությամբ արժեզրկումից կորուստների և արտարժույթային տարբերություններից օգուտների և վնասների), մինչև ակտիվի ապաճանաչումը, երբ նախկինում այլ համապարփակ եկամտում ճանաչված ամբողջ օգուտը կամ վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում: Վաճառքի համար մատչելի ակտիվի գծով տոկոսը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը ապաճանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև՝ ամորտիզացման միջոցով:

Ապահանջում

Ֆինանսական ակտիվն ապահանջվում է, երբ ֆինանսական ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու իրավունքների գործողության ժամկետը լրացել է կամ երբ Խումբը փոխանցել է ակտիվի սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները: Բոլոր իրավունքները կամ պարտավորությունները, որոնք առաջացել կամ պահպանվել են փոխանցման ժամանակ, ճանաչվում են առանձին որպես ակտիվներ կամ պարտավորություններ: Ֆինանսական պարտավորությունը ապահանջվում է, երբ մարվում է, չեղյալ է համարվում կամ լրացել է դրա ուժի մեջ մնալու ժամկետը:

Խումբը որոշ ակտիվներ ապահանջում է նաև այն դեպքում, երբ դուրս է գրում անհավաքագրելի ճանաչված ակտիվներին վերաբերող մնացորդները:

Հետգնման և հակադարձ հետգնման համաձայնագրեր

Հետգնման պայմանագրերով («ռեպո») վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ, որոնց դեպքում արժեթղթերը շարունակում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, և պարտավորությունը ներառվում է հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունը տոկոսային ծախս է և ճանաչվում է ֆինանսական արդյունքներում ռեպո համաձայնագրի ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Հակադարձ հետգնման պայմանագրերով (հակադարձ ռեպո) ձեռքբերված արժեթղթերը հաշվառվում են հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներում: Գնման և հակադարձ վաճառքի գների տարբերությունը տոկոսային եկամուտ է և ճանաչվում է ֆինանսական արդյունքներում ռեպո համաձայնագրի ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ձեռքբերված արժեթղթերը վաճառվում են երրորդ կողմին, արժեթղթերը վերադարձնելու պարտականությունը հաշվառվում է որպես առևտրային պարտավորություն և չափվում իրական արժեքով:

Հիմնական միջոցներ**Սեփական ակտիվներ**

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները, բացառությամբ շենքերի, որոնք արտացոլված են վերագնահատված արժեքով:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

Վարձակալված ակտիվներ

Այն վարձակալությունը, որի դեպքում Խմբին են փոխանցվում ակտիվի սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները, հանդիսանում է ֆինանսական վարձակալություն: Ֆինանսական վարձակալությամբ ձեռք բերված սարքավորումները ներկայացվում են իրական արժեքից և վարձակալության սկզբում վարձակալության նվազագույն վճարների ներկա արժեքից նվազագույնով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Վերագնահատում

Խմբի շենքերը ենթակա են վերագնահատման կանոնավոր կերպով: Վերագնահատման հաճախականությունը կախված է վերագնահատման ենթակա շենքերի իրական արժեքների շարժից: Երբ շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճը ճանաչվում է ուղղակիորեն

սեփական կապիտալում: Սակայն եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, ապա այն ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Երբ շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում: Սակայն եթե այդ նվազումը վերականգնում է նույն ակտիվի սեփական կապիտալում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած աճը, ապա այն ճանաչվում է սեփական կապիտալում:

Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Հողի համար մաշվածություն չի հաշվարկվում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Շենքեր	20	5
Համակարգիչներ	1	100
Տրանսպորտային միջոցներ	5	20
Սարքավորումներ	5	20
Այլ հիմնական միջոցներ	5	20

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով հետևյալ երկու ժամկետներից նվազագույնով. վարձակալման ժամկետ կամ ակտիվի օգտակար ծառայության ժամկետ:

Ոչ նյութական ակտիվներ

Խմբի կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները: Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Համակարգչային ծրագրեր և լիցենզիաներ	1-10	100-10

Արժեզրկում

Անորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Անորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հիմնականում ներառում են վարկերը, այլ դեբիտորական պարտքերը («վարկեր և դեբիտորական պարտքեր»): Խումբը կանոնավոր կերպով վերանայում է վարկերը և դեբիտորական պարտքերը՝ արժեզրկումը գնահատելու նպատակով: Վարկը կամ դեբիտորական պարտքը արժեզրկվում է, և արժեզրկումից կորուստներ ճանաչվում են այն և միայն այն դեպքում, երբ առկա է անկողմնակալ վկայություն սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ ավելի դեպքերի արդյունք հանդիսացող արժեզրկման մասին, և այդ դեպքը (կամ դեպքերը) ազդեցություն ունի վարկի գծով դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի վրա, որոնք հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման օբյեկտիվ վկայությունը կարող է ներառել պարտավորությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը վարկառուի կողմից, վարկային պայմանագրի պայմանների խախտումները վարկառուի կողմից, վարկի կամ փոխառության պայմանների այնպիսի վերանայում, որը Խումբն այլ հանգամանքներում չէր դիտարկի, վարկառուի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները, արժեթղթի գործող շուկայի վերացումը, գրավի արժեքի նվազումը կամ ակտիվների խմբին վերաբերող այլ հասանելի տվյալները, ինչպիսիք են խմբի կազմի մեջ մտնող վարկառուների վճարունակության վատթարացումը, կամ տվյալ խմբի կազմի մեջ մտնող վարկառուների կողմից պարտականությունների չկատարման հետ փոխկապակցված տնտեսական պայմանների փոփոխությունը:

Նախևառաջ Խումբը գնահատում է, թե արդյոք գոյություն ունի արժեզրկման օբյեկտիվ վկայություն առանձին-առանձին այն վարկերի ու դեբիտորական պարտքերի համար, որոնք առանձին վերցված զգալի են, և առանձին-առանձին կամ խմբային այն վարկերի ու դեբիտորական պարտքերի համար, որոնք առանձին վերցված զգալի չեն: Եթե Խումբը որոշում է, որ առանձին գնահատված վարկի կամ դեբիտորական պարտքի համար առկա չէ արժեզրկման օբյեկտիվ վկայություն՝ լինի այն էական թե ոչ, ապա այն այդ վարկը ներառում է վարկային ռիսկի համանման բնութագրիչներ ունեցող վարկերի և դեբիտորական պարտքերի խմբում և կատարում է խմբային գնահատում՝ արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնց գծով առանձին իրականացվել է արժեզրկման ուսումնասիրություն և որոնց գծով ճանաչվել են կամ շարունակվում են ճանաչվել արժեզրկման կորուստներ, չեն ներառվում արժեզրկման խմբային գնահատման մեջ:

Եթե առկա է վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի օբյեկտիվ վկայություն, ապա կորստի չափը գնահատվում է վարկի կամ դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի և ապագա գնահատված դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերության չափով, ներառյալ երաշխիքներից և գրավից ստացվելիք վարկի կամ դեբիտորական պարտքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչած գումարները: Պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը և անցյալի փորձի վրա հիմնված վնասները, որոնց գծով ներկա տնտեսական պայմաններն արտացոլող առկա տեղեկատվության հիման վրա կատարվել են ճշգրտումներ, հանդիսանում են դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գնահատման հիմք:

Որոշ դեպքերում վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկման կորստի գումարը գնահատելու համար պահանջվող տեղեկատվությունը կարող է սահմանափակ լինել կամ ամբողջությամբ չհամապատասխանել ներկա պայմաններին: Սա կարող է լինել այն դեպքում, երբ վարկառուն ֆինանսական դժվարություններ ունի և Խմբի տրամադրության տակ կան քիչ տվյալներ համանման վարկառուների մասին: Այս դեպքերում Խումբը գնահատում է արժեզրկումից կորստի գումարը՝ ելնելով իր փորձից ու դատողություններից:

Վարկերի և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքներում և հակադարձվում միայն այն դեպքում, երբ փոխհատուցվող գումարի հետագա աճը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած դեպքին:

Այն դեպքերում, երբ վարկի հավաքագրումը հնարավոր չէ, վարկը դուրս է գրվում արժեզրկման պահուստի հաշվին: Խումբը վարկի մնացորդը դուրս է գրում, երբ Խմբի ղեկավարությունը որոշում է, որ վարկը ենթակա չէ հավաքագրման և վարկի վերադարձի հետ կապված բոլոր անհրաժեշտ քայլերը կատարված են:

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները ներառում են վաճառքի համար մատչելի ակտիվներում ընդգրկված սեփական կապիտալի չգնանշված գործիքները, որոնք չեն հաշվառվում իրական արժեքով, քանի որ այն հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել: Եթե առկա է օբյեկտիվ վկայություն, որ նման ներդրումները արժեզրկված են, ապա արժեզրկումից կորուստը իրենից ներկայացնում է ներդրման հաշվեկշռային արժեքի և ապագա գնահատված դրամական հոսքերի՝ համանման ֆինանսական ակտիվի շուկայական տոկոսադրույքով գեղջված ներկա արժեքի տարբերությունն է:

Այս ներդրումների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքներում և ենթակա չեն հակադարձման:

Ոչ ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, վերանայվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերից և օգտագործման արժեքից առավելագույնը: Օգտագործման արժեքը գնահատելիս ապագա գնահատված դրամական հոսքերը գեղջվում են՝ կիրառելով մինչև հարկումը այն դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի և ակտիվին բնորոշ ռիսկի՝ շուկայի ներկա գնահատականը: Այլ ակտիվներից էականորեն անկախ դրամական հոսքեր չստեղծող ակտիվի դեպքում փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ խմբի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է իր փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և հակադարձվում միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը կորոշվեր մաշվածքը կամ ամորտիզացիան նվազեցնելուց հետո, եթե արժեզրկումից կորուստ չճանաչվեր:

Վերանայված վարկեր

Վարկերի վերանայումը կարող է հանգեցնել վճարումների երկարաձգումների և վարկի մարման նոր պայմանների մասին համաձայնության: Երբ վարկի պայմանները վերանայվում են, վարկն այլևս չի համարվում ժամկետանց: Գնկավարությունը շարունակաբար վերանայում է վերանայված պայմաններով վարկերը, համոզվելու համար, որ բոլոր համաձայնությունները պահպանված են և որ ապագա վճարումները կկատարվեն: Վարկերը շարունակում են մնալ արժեզրկման անհատական կամ խմբային գնահատման առարկա՝ օգտագործելով վարկի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը:

Վարկավորման պարտավորվածություններ

Բնականոն գործունեության ընթացքում Խումբը հանձն է առնում վարկային բնույթի պարտավորվածություններ, որոնք ներառում են չօգտագործված վարկային գծերն, ակրեդիտիվներն ու երաշխիքները և տրամադրում է վարկային ապահովագրման այլ տեսակներ:

Ֆինանսական երաշխիքներն իրենցից ներկայացնում են պայմանագրեր, որոնք պարտավորեցնում են Խմբին կատարել որոշակի վճարումներ, որոնք կփոխհատուցեն երաշխիքի սեփականատիրոջ այն վնասները, որոնք նա կկրեր, եթե առանձին պարտատերն ի վիճակի չլիներ կատարել վճարումները պարտքային գործիքի պայմաններով նախատեսված ժամկետներում:

Ֆինանսական երաշխիքի գծով պարտավորությունն ի սկզբանե ճանաչվում է իրական արժեքով՝ հաշվի չառնելով գործարքի հետ կապված ծախսումները և հետագայում չափվում է երկու մեծություններից առավելագույնով՝ ի սկզբանե ճանաչված գումարը՝ հանած կուտակված ամորտիզացիան կամ երաշխիքի գծով կորուստների պահուստը: Ֆինանսական երաշխիքների գծով կորուստների պահուստը և վարկային այլ պարտավորվածությունները ճանաչվում են, երբ գոյություն ունի վնաս կրելու հավանականություն և այդ վնասը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ֆինանսական երաշխիքի գծով պարտավորությունները և վարկային այլ պարտավորվածությունների գծով պահուստները ներառվում են այլ պարտավորությունների կազմում:

Վաճառքի համար պահվող ակտիվներ

Ոչ ընթացիկ ակտիվները դասակարգվում են վաճառքի համար պահվող, երբ հաշվեկշռային արժեքը ենթակա է փոխհատուցման ոչ թե դրանց հետագա շահագործման, այլ վաճառքի միջոցով: Դրանց վաճառքը ենթադրվում է իրականացնել վաճառքի համար պահվող դասակարգումից հետո մեկ տարվա ընթացքում: Վաճառքի համար պահվող դասակարգված ոչ ընթացիկ ակտիվները ճանաչվում են հաշվեկշռային արժեքի կամ իրական արժեքի՝ հանած վաճառքի ծախսերը, նվազագույնով: Եթե վերջինս ավելի փոքր է, քան հաշվեկշռային արժեքը, ապա ճանաչվում է արժեզրկումից կորուստ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Իրական արժեքի՝ հանած վաճառքից ծախսերը, հետագա ցանկացած աճ ճանաչվում է միայն տվյալ ակտիվի նախկինում արժեզրկված գումարների չափով:

Շնորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհները ներառվում են այլ պարտավորություններում և կրեդիտագրվում են եկամուտներին գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Պահուստներ

Պահուստը ֆինանսական դրության մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Խումբը որպես անցյալ դեպքերի արդյունք ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունը էական է, պահուստը որոշվում է ապագա ակնկալվող դրամական հոսքերը գեղչելով մինչև հարկումը այն դրույքով, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի, և կիրառելի լինելու դեպքում, պարտավորությանը բնորոշ ռիսկերի ներկա շուկայական գնահատումները:

Բաժնետիրական կապիտալ

Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Խմբի կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Սովորական բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, երբ հայտարարվում են:

Բաժնետոմսերի հավելավճար

Բաժնետոմսերի անվանական արժեքից բարձր վճարված ցանկացած գումար ճանաչվում է որպես բաժնետոմսերի հավելավճար:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական դրության մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Ծանոթագրություն 6. «Զուտ տոկոսային եկամուտներ»

	01.10.14- 31.12.14	01.01.14- 31.12.14	01.10.13- 31.12.13	01.01.13- 31.12.13
Տոկոսային եկամուտներ	3,326,215	12,583,151	2,926,426	10,896,817
Վարկեր և փոխառություններ հաճախորդներին	2,901,787	11,193,648	2,678,538	9,821,261
Վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթեր	210,528	824,507	184,373	751,747
Ֆինանսական կազմակերպությունների հաշիվներ	165,188	420,476	36,338	218,131
Հակադարձ ռեպո գործառնություններ	47,358	134,685	25,195	100,162
Արժեգրված ակտիվների գծով հաշվեգրված տոկոսներ	0	0	0	0
Այլ տոկոսային եկամուտներ	1,354	9,835	1,982	5,516

	(1,583,740)	(6,272,571)	(1,571,379)	(5,744,021)
Տոկոսային և նմանատիպ ծախսեր				
Հաճախորդների հաշիվներ	(1,209,298)	(4,900,091)	(1,230,181)	(4,433,432)
Ֆինանսական կազմակերպությունների հաշիվներ	(320,894)	(1,318,932)	(341,198)	(1,309,808)
Թողարկված պարտքային արժեթղթեր	0	0	0	0
Ռեպո գործառնություններ	(53,548)	(53,548)	0	(781)
Այլ տոկոսային ծախսեր	0	0	0	0

Զուտ տոկոսային եկամուտ	1,742,475	6,310,580	1,355,047	5,152,797
-------------------------------	------------------	------------------	------------------	------------------

Ծանոթագրություն 7. «Զուտ կոմիսիոն վճարներ»

	01.10.14- 31.12.14	01.01.14- 31.12.14	01.10.13- 31.12.13	01.01.13- 31.12.13
Կոմիսիոն վճարների տեսքով եկամուտներ	453,382	1,665,635	387,477	1,364,852
Դրամարկղային գործառնություններ	42,796	138,108	35,852	110,647
Փոխանցումներից	112,472	374,277	97,576	301,050
Վարկերից	27,573	103,512	70,203	125,156
Վճարային քարտերով գործառնություններ	196,542	752,315	174,118	632,317
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	10,511	31,786	6,838	23,997
Այլ գործառնություններ	63,488	265,637	2,890	171,685

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(142,578)	(536,450)	(174,499)	(516,962)
Փոխանցումներ	(22,391)	(79,254)	(17,144)	(63,827)
Դրամարկղային գործառնություններ	(21,742)	(70,965)	(72,163)	(148,444)
Վճարային քարտերով գործառնություններ	(88,080)	(351,920)	(79,430)	(283,569)
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	(3,609)	(10,877)	(785)	(3,007)
Այլ ծախսեր	(6,756)	(23,434)	(4,977)	(18,115)
Մտացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ	310,804	1,129,185	212,978	847,890

Ծանոթագրություն 8. «Զուտ եկամուտ առևտրային գործունեությունից»

	01.10.14- 31.12.14	01.01.14- 31.12.14	01.10.13- 31.12.13	01.01.13- 31.12.13
Զուտ առևտրային եկամուտ	1,087,316	1,693,582	338,328	673,920
Արտարժույթային գործարքներից զուտ եկամուտ	490,849	1,128,306	249,786	813,263
Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ եկամուտ (վնաս)	884,300	846,425	(1,031)	(252,289)
Առևտրային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ/ (վնաս)	(45,852)	(54,923)	43,177	45,768
Վճանցյալ գործիքներից զուտ եկամուտ/ (վնաս)	(255,046)	(248,729)	0	2,155
Առևտրային ակտիվների առք ու վաճառքից զուտ եկամուտ/ (վնաս)	2,822	(305)	143	766
Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ շահույթ	(10)	8,270	37,942	43,447
Թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ եկամուտ	10,253	14,538	8,311	20,810

Ծանոթագրություն 9. «Եկամուտ շահարաժիհներից և այլ գործառնական եկամուտներ»

	01.10.14- 31.12.14	01.01.14- 31.12.14	01.10.13- 31.12.13	01.01.13- 31.12.13
Եկամուտ շահարաժիհներից	850	2,826	661	2,317
Այլ գործառնական եկամուտներ	204,772	570,445	314,124	823,997
Հիմնական միջոցների վաճառքից զուտ եկամուտ	45,946	49,149	11,404	(1,624)
Ստացված տույժեր և տուգանքներ	106,599	327,633	95,787	464,426
Շնորհներից եկամուտ	604	2,422	604	2,422
Պատճառված վնասի հատուցումից	0	0	0	0
Այլ եկամուտ	51,623	191,241	206,329	358,773

Ծանոթագրություն 10. «Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին»

	01.10.14- 31.12.14	01.01.14- 31.12.14	01.10.13- 31.12.13	01.01.13- 31.12.13
Զուտ մասհանումներ/վերադարձ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	(848,373)	(755,520)	(365,973)	(300,139)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառվություններ	(817,757)	(697,323)	(357,194)	(291,700)
Այլ ակտիվներ	(31,321)	(60,435)	(7,388)	240
Այլ պահուստներ	705	2,238	(1,391)	(8,679)

Ծանոթագրություն 11, 20, 21. «Ընդհանուր վարչական ծախսեր»

	01.10.14- 31.12.14	01.01.14- 31.12.14	01.10.13- 31.12.13	01.01.13- 31.12.13
Վշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(651,141)	(2,976,340)	(762,832)	(3,071,617)
Հիմնական միջոցների մաշվածություն	(151,802)	(670,800)	(229,572)	(949,704)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	(54,775)	(88,533)	(32,036)	(111,449)
Նյութական ակտիվների վերանորոգման և սպասարկման ծախսեր	(32,920)	(105,676)	(30,561)	(131,909)
Գովազդի ծախսեր	(182,077)	(348,044)	(117,863)	(436,334)
Գործուղման ծախսեր	(9,149)	(19,910)	(4,815)	(14,946)
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	(32,023)	(124,872)	(29,454)	(125,692)
Վարձակալության գծով ծախսեր	(101,483)	(408,789)	(92,894)	(371,573)
Հարկեր, (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	(7,361)	(23,051)	(8,204)	(17,324)
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	(14,991)	(48,586)	(19,335)	(65,425)
Անվտանգության գծով ծախսեր	(47,955)	(177,322)	(40,019)	(160,487)
Հիմնական միջոցների արժեզրկումից կորուստներ	(16,738)	(21,586)	(10,471)	(10,471)
Հիմնական միջոցների օտարումից կորուստներ	0	0	0	0
Գրասենյակային ծախսեր	(5,071)	(46,056)	(11,248)	(47,443)
Դրամարկղային հավաքագրման ծախսեր(հնկասացիոն ծախսեր)	(7,696)	(26,475)	(463)	(24,515)
ՀԾ Բանկ-ի գծով	(35,907)	(137,520)	(33,207)	(120,871)
ԱՐՔԱ-ի գծով	(23,725)	(93,539)	(25,869)	(93,126)
Ապահովագրության գծով ծախսեր	(30,442)	(112,538)	(33,995)	(121,059)
Այլ ծախսեր	(72,584)	(238,446)	(188,286)	(324,125)
Ընդամենը այլ վարչական ծախսեր	(1,477,840)	(5,668,083)	(1,671,124)	(6,198,070)

Աշխատակիցների միջին թվաքանակն է 2014թ. չորրորդ եռամսյակում 728 (2013թ. չորրորդ եռամսյակում 749), մեկ աշխատողին բաժին ընկնող միջին ամսական աշխատավարձի չափը 2014թ. չորրորդ եռամսյակում կազմում է 320.0 հազ.դրամ (2013թ. չորրորդ եռամսյակում կազմում է 341.7 հազ.դրամ):

Ծանոթագրություն 12. «Այլ գործառնական ծախսեր»

	01.10.14- 31.12.14	01.01.14- 31.12.14	01.10.13- 31.12.13	01.01.13- 31.12.13
Վճարված տուգանքներ	(204)	(400)	(147)	(647)
Ավանդների ապահովագրման ծախսեր	(25,639)	(97,128)	(22,487)	(83,369)
Այլ գործառնական ծախսեր	(55,507)	(130,677)	(108,435)	(177,273)
Ընդամենը այլ գործառնական ծախսեր	(81,350)	(228,205)	(131,069)	(261,289)

Ծանոթագրություն 13. «Շահութահարկի գծով ծախս/փոխհատուցում»

	01.10.14- 31.12.14	01.01.14- 31.12.14	01.10.13- 31.12.13	01.01.13- 31.12.13
Շահութահարկի գծով ծախս				
Ընթացիկ հարկի գծով ծախս	(36,828)	(300,432)	(202,335)	(202,335)
Տվյալ ժամանակաշրջանում ճանաչված՝ նախորդ ժամանակաշրջանների ընթացիկ հարկի ճշգրտումները				
Հետաձգված հարկի գծով ծախս (փոխհատուցում)	(169,896)	(374,876)	58,962	(90,122)
Ընդամենը	(206,724)	(675,308)	(143,373)	(292,457)

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2013 թ.՝ 20%): Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 20% հիմնական դրույքաչափը կիրառելով:

	Մնացորդ 31.12.13 դրությամբ	Ֆինանսական արդյունքներով ճանաչված	Մեփական կապիտալում ճանաչված	Այլ հաշվով	Մնացորդ 31.12.14 դրությամբ
Առևտրային արժեթղթեր	3,822				3,822
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր					
Հիմնական միջոցներ	33,512				33,512
Այլ պարտավորություններ	24,931				24,931
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	62,265				62,265
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	(204,766)		117,921		(86,845)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	(350,417)	(371,237)			(721,654)
Այլ ակտիվներ	(27,340)	(3,639)		1,942	(29,036)
Հիմնական միջոցներ	(1,013,621)		18,991		(994,630)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	(1,596,144)	(374,876)	136,912	1,942	(1,832,165)
Ձուտ հետաձգված հարկային պարտավորություն/Ծանոթ. 13	(1,533,878)	(374,876)	136,912	1,942	(1,769,900)

Ծանոթագրություն 14. « Դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում»

	31.12.14	31.12.13
Դրամական միջոցներ և մնացորդներ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում	28,325,239	21,103,526
Կանխիկ դրամական միջոցներ	8,533,242	6,630,166
Դրամական միջոցների այլ տեղաբաշխումներ	0	
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	17,343,318	9,930,206
Ֆինանսական կազմակերպությունների թղթակցային հաշիվներ	2,448,679	4,543,154

Ծանոթագրություն 15. « Առևտրային արժեթղթեր»

	31.12.14	31.12.13
Առևտրային արժեթղթեր	0	268,904
ՀՀ ֆինանս. մախարարության կողմից թողարկված արժեթղթեր – չզննված	0	214,792
ՀՀ ոչ պետական պարտատոմսեր	0	54,112

Ծանոթագրություն 16. «Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ»

	31.12.14	31.12.13
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	7,361,737	2,883,839
Ֆինանսական կազմակերպությունների վարկեր և ավանդներ	5,485,867	881,062
Դեպոզիտներ և միջոցներ ԶԳ-ում	520,000	520,000
Հակադարձ ռեպո համաձայնագրեր	842,390	1,040,365
Այլ հաշիվներ	513,480	442,412

Ծանոթագրություն 17. «Ածանցյալ ֆինանսական գործիքներ»

Հազար ՀՀ դրամ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Պայմանական գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավ. իրական արժեք	Պայմանական գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավ. իրական արժեք
Վաճառքի համար պահվող ածանցյալներ						
<i>Արտարժույթով պայմանագրեր</i>						
Սվոփեր-ներքին	3,431,745	0	180,645	0	0	
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքներ	3,431,745	0	180,645	0	0	

Ծանոթագրություն 18. «Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ»

	31.12.14	31.12.13
Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ	93,624,506	79,957,304
Վարկեր	85,871,047	73,877,370
Ֆակտորինգ	0	
Օվերդրաֆտ	11,053,767	9,161,337
Ակրեդիտիվ	856	5,486
Ֆինանսական վարձակալություն	408,627	170,629
Արժեզրկումից պահուստներ վարկերի և փոխատվությունների գծով	(3,709,791)	(3,257,518)

31.12.14թ. դրությամբ Բանկն ունի էական կենտրոնացում տրամադրված վարկերի գծով 17,108,119 հազար դրամ (համախառն վարկային պորտֆելի 17.58%) ընդհանուր գումարով, տրամադրված թվով 10 վարկառուների և նրանց հետ փոխկապակցված անձանց (31.12.2013թ.՝ 18,925,171 հազար դրամ

(համախառն վարկային պորտֆելի 23%-ը): Նշված վարկերի գծով անհատական արժեզրկումից պահուստները կազմում են 94,503 հազար դրամ (2013թ.՝ 1,575,601 հազար դրամ):

Տրամադրված վարկերի և փոխատվությունների վերլուծությունն ըստ տնտեսության ճյուղերի ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Արդյունաբերություն	9,719,267	5,992,118
Գյուղատնտեսություն	2,625,400	2,212,206
Շինարարություն	9,143,054	9,691,524
Առևտուր	11,362,752	8,538,926
Տրանսպորտ	5,040,614	7,500,383
Ծառայություններ	1,343,862	1,319,189
Սպառողական	31,631,513	27,027,398
Հիփոթեքային	20,672,932	16,453,609
Այլ	5,794,904	4,479,470
Արժեզրկումից պահուստներ վարկերի և փոխատվությունների գծով	(3,709,791)	(3,257,518)
Ընդամենը	93,624,506	79,957,304

Վարկերի և փոխատվությունների գծով արժեզրկման պահուստի շարժն ըստ տնտեսության ճյուղերի հետևյալն է.

31.12.2014

Հազար ՀՀ դրամ	Արդյունաբերություն	Գյուղատնտեսություն	Շինարարություն	Առևտուր	Տրանսպորտ	Ծառայություններ	Սպառողական	Հիփոթեքային	Այլ	Ընդամենը
2014թ. հունվարի 1 դրությամբ	191,031	301,154	1,528,998	541,880	87,776	58,766	129,796	375,963	42,154	3,257,518
Տարվա ծախս/(հակադարձում)	185,575	54,504	119,585	(178,874)	(14,529)	(24,288)	209,339	(2,407)	348,418	697,323
Դուրսգրում	(28,676)	(41,395)		(154,793)	(12,062)		(371,594)	(128,056)	(49,631)	(786,207)
Վերադարձ	18,562	82,121		54,030	257	16,618	233,142	133,064	3,363	541,157
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	366,492	396,384	1,648,583	262,243	61,442	51,096	200,683	378,564	344,304	3,709,791
Անհատական արժեզրկում	356,693	373,465	1,646,745	202,702	61,442	28,668	10,410	208,914	314,982	3,204,021
Խմբային արժեզրկում	9,799	22,919	1,838	59,541	-	22,428	190,273	169,650	29,322	505,770
Անհատապես արժեզրկված վարկերի համախառն գումար (մինչև անհատապես գնահատված արժեզրկման պահուստներով զտելը)	505,426	571,391	1,663,497	532,577	413,208	60,887	28,211	374,726	866,763	5,016,686

31.12.2013

Հազար ՀՀ դրամ	Արդյունաբերություն	Գյուղատնտեսություն	Շինարարություն	Առևտուր	Տրանսպորտ	Ծառայություններ	Սպառողական	Հիփոթեքային	Այլ	Ընդամենը
2013թ. հունվարի 1 դրությամբ	2,176,076	264,738	1,638,760	427,584	137,322	28,662	226,751	289,023	26,898	5,215,814
Տարվա ծախս/(հակադարձում)	126,532	(8,145)	(19,948)	243,290	(95,920)	79,111	(47,981)	136,432	(121,671)	291,700
Դուրսգրում	(2,137,185)	-	(92,544)	(211,262)	-	(51,261)	(196,493)	(107,185)	-	(2,795,930)
Վերադարձ	25,608	44,561	2,730	82,268	46,374	2,254	147,519	57,693	136,927	545,934
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	191,031	301,154	1,528,998	541,880	87,776	58,766	129,796	375,963	42,154	3,257,518
Անհատական արժեզրկում	177,947	289,703	1,420,681	509,423	10,533	30,474	25,087	192,462	33,430	2,689,740
Խմբային արժեզրկում	13,084	11,451	108,317	32,457	77,243	28,292	104,709	183,501	8,724	567,778
Անհատապես արժեզրկված վարկերի համախառն գումար (մինչև անհատապես գնահատված արժեզրկման պահուստներով զտելը)	431,650	501,196	1,420,681	865,449	354,897	60,887	25,087	289,595	117,419	4,066,861

Վարկերի և փոխառությունների գծով արժեզրկման պահուստի շարժը հետևյալն է.

<u>Հաճախորդներին տրված վարկերի, փոխառությունների գծով</u>	01.01.14-31.12.14	01.01.13-31.12.13
Սկզբնական մնացորդ	3,257,518	5,215,814
Պահուստին կատարված զուտ մասհանումներ/ (վերականգնում)	697,323	291,700
(Դուրս գրում)/ վերադարձ	(245,050)	(2,249,996)
Վերջնական մնացորդ	3,709,791	3,257,518

Տրամադրված վարկերի և փոխառությունների վերլուծությունը ըստ հաճախորդների ունի հետևյալ տեսքը.

	31.12.14	31.12.13
Պետական ձեռնարկություններ	4,297,769	1,740,763
Մասնավոր ձեռնարկություններ	36,201,864	33,677,440
Ֆիզիկական անձինք	53,431,520	44,140,635
Անհատ ձեռնարկատերեր	3,337,603	3,516,316

Ոչ առևտրային կազմակերպություններ	65,541	139,668
Ընդամենը վարկեր	97,334,297	83,214,822
Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների գծով հնարավոր կորուստների պահուստ	(3,709,791)	(3,257,518)
Ընդամենը զուտ վարկեր	93,624,506	79,957,304

Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերը ներկայացվում են ստորև.

	31.12.14	31.12.13
Սպառողական	1,468,917	6,087,633
Վարկային քարտեր	22,685,248	14,128,198
Հիփոթեքային	20,672,932	16,453,609
Ոսկու վարկեր	6,561,068	5,570,919
Ավտոմեքենաների ձեռքբերման	916,083	1,240,648
Այլ	1,127,272	659,628
Ընդամենը ֆիզիկական անձանց տրամադրված վարկեր	53,431,520	44,140,635

Ֆինանսական վարձակալության գծով տեղեկատվությունը ներկայացվում է ստորև.

	31.12.14	31.12.13
<i>Ֆինանսական վարձակալության գծով համախառն ներդրումներ</i>		
Մինչև 1 տարի	10,637	9,652
1-5 տարի	483,732	207,369
	494,369	217,021
Ֆինանսական վարձակալության գծով չվաստակած ապագա ֆինանսական եկամուտ	(85,742)	(46,392)
<i>Ֆինանսական վարձակալության գծով զուտ ներդրումներ</i>	408,627	170,629

Ֆինանսական վարձակալության գծով արժեզրկումից պահուստները ներառված են վարկերի և փոխատվությունների գծով արժեզրկումից պահուստում և 31.12.14թ. դրությամբ կազմում են 2,448 հազար դրամ, 31.12.13թ. դրությամբ կազմում են 670 հազար դրամ:

Ծանոթագրություն 19. «Վաճառքի համար մատչելի ներդրումներ»

	31.12.14	31.12.13
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	1,943,118	7,544,409
Չգնանշվող ներդրումներ		
ՀՀ ոչ պետական պարտատոմսեր	97,161	101,946
ՀՀ ֆինանսների նախարարության կողմից թողարկված արժեթղթեր	1,047,935	6,995,104
ՀՀ բաժնեմասային արժեթղթեր	281,202	76,223
ՏՀԶԿ երկրների բաժնեմասային արժեթղթեր	516,820	371,136

Բոլոր պարտքային արժեթղթերը ունեն հաստատուն տոկոսներ:

Բոլոր չգնանշված վաճառքի համար մատչելի ՀՀ բաժնեմասային արժեթղթերը գրանցված են ինքնարժեքով, քանի որ իրական արժեքը չի կարող արժանահավատորեն գնահատվել: Այս ներդրումների համար չկա գնանշվող շուկա և Բանկը նախատեսում է դրանք պահել երկար ժամկետով:

Չգնանշվող վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերը չափվում են իրական արժեքով, օգտագործելով գնահատման տեխնիկա՝ հիմնված տվյալ պահին գործող շուկայական տոկոսադրույքների վրա, որպես տվյալ ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի գեղչատոկոս:

Ծանոթագրություն 20,21: Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ»

Հոդվածի անվանումը	Հոդ և շենքեր	Համակ. և կապի միջոցներ	Փոխադրամիջոցներ	Այլ հիմն.միջոցներ	Հիմն.միջոցով կապ. ներդ. .	Վարձակ.հիմն.մ իջ.գծով կապ. ներդ.	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք								
01.01.14-ի դրությամբ	5,626,000	2,289,170	231,477	1,206,807	2,654	809,196	584,578	10,749,882
Ավելացում/ ներքին շարժ	200,965	177,927	158	527,572	257,847	107,280	149,997	1,421,746
Օտարում/Դուրս գրում/ներքին շարժ	-	(4,964)	(17,827)	(421,547)	(257,797)	(5,020)	(58)	(707,213)
31.12.14-ի դրությամբ	5,826,965	2,462,133	213,808	1,312,832	2,704	911,456	734,517	11,464,415
Կուտակված մաշվածություն								
01.01.14-ի դրությամբ	-	(1,575,395)	(140,965)	(874,270)	-	(217,516)	(392,694)	(3,200,840)
Ավելացում	(128,895)	(281,259)	(28,087)	(118,385)	-	(114,175)	(88,533)	(759,334)
Օտարում/Դուրս գրում	-	4,728	15,455	21,253	-	5,019	-	46,455
31.12.14-ի դրությամբ	(128,895)	(1,851,926)	(153,597)	(971,402)	-	(326,672)	(481,227)	(3,913,719)
Հաշվեկշռային արժեք	5,698,070	610,207	60,211	341,430	2,704	584,784	253,290	7,550,696

Հոդվածի անվանումը	Հոդ և շենքեր	Համակ. և կապի միջոցներ	Փոխադրամիջոցներ	Այլ հիմն.միջոցներ	Հիմն.միջոցով կապ. ներդ. .	Վարձակ.հիմն.մ իջ.գծով կապ. ներդ.	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք								
01.01.13-ի դրությամբ	4,377,710	1,928,636	265,822	1,069,351	2,521	348,131	459,610	8,451,781
Ավելացում/ ներքին շարժ	25,217	403,456	18,712	256,067	497,801	478,959	124,968	1,805,180
Օտարում/Դուրս գրում/ներքին շարժ	(10,471)	(42,922)	(53,057)	(118,611)	(497,668)	(17,894)	-	(740,623)
Վերագնահատում	2,414,982	-	-	-	-	-	-	2,414,982
Վերագնահատման ճշգրտում	(1,181,438)	-	-	-	-	-	-	(1,181,438)
31.12.13-ի դրությամբ	5,626,000	2,289,170	231,477	1,206,807	2,654	809,196	584,578	10,749,882
Կուտակված մաշվածություն								
01.01.13-ի դրությամբ	(784,983)	(1,276,382)	(108,237)	(816,108)	-	(126,105)	(281,246)	(3,393,061)
Ավելացում	(396,455)	(316,443)	(42,166)	(101,827)	-	(92,805)	(111,448)	(1,061,144)
Օտարում/Դուրս գրում	0	17,430	9,438	43,665	-	1,394	-	71,927
Վերագնահատում	1,181,438	-	-	-	-	-	-	1,181,438
31.12.13-ի դրությամբ	-	(1,575,395)	(140,965)	(874,270)	-	(217,516)	(392,694)	(3,200,840)
Հաշվեկշռային արժեք	5,626,000	713,775	90,512	332,537	2,654	591,680	191,883	7,549,041

Ծանոթագրություն 22. «Վաճառքի համար պահվող ակտիվներ»

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Բանկի կողմից տրամադրված վարկերի ապահովվածություն հանդիսացող գրավների տնօրինման արդյունքում ձեռք բերված ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների մասնրամասները դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված են ստորև.

	31.12.14	31.12.13
Անշարժ գույք	1,893,336	656,364
Փոխադրամիջոցներ	16,857	0
Այլ	348,060	355,660
Ընդամենը	2,258,253	1,012,014

Ծանոթագրություն 23. «Այլ ակտիվներ»

	31.12.14	31.12.13
Կանխավճարներ և այլ դեբիտորներ	322,547	425,563
Դրամական փոխանցումների համակարգերի գծով ստացվելիք գումարներ	39,017	27,926
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	361,564	453,489
Արժեզրկումից պահուստներ այլ ֆինանսական ակտիվների գծով	(34,949)	(74,501)
Ընդամենը զուտ այլ ֆինանսական ակտիվներ	326,615	378,988
Չամորտիզացված ապահովագրավճարներ	41,766	59,778
Չաշվարկներ աշխատակիցների հետ	2,056	3,505
Կանխավճարներ մատակարարներին	172,135	296,516
Կանխավճարներ այլ հարկերի գծով	56,276	11,341
Պահեստ	192,653	223,995
Թանկարժեք մետաղներ	235,226	52,462
Այլ	1,865	1,865
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	701,977	649,462
Ընդամենը այլ ակտիվներ	1,028,592	1,028,450

Այլ ակտիվների գծով արժեզրկման կորուստների պահուստի շարժը հետևյալն է .

Այլ ակտիվների գծով	01.01.14-31.12.14	01.01.13-31.12.13
Սկզբնական մնացորդ	74,501	73,690
Պահուստին կատարված զուտ մասհանումներ/ (վերականգնում)	60,435	(240)
(Դուրս գրում)/ վերադարձ	(99,987)	1,051
Վերջնական մնացորդ	34,949	74,501

Ծանոթագրություն 24. «Պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ»

	31.12.14	31.12.13
Պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ	4,903,789	4,043,242

ՀՀ ԿԲ հաշիվներ	3,739,034	2,878,619
Ստորադաս փոխառություն	1,164,755	1,164,623

Ծանոթագրություն 25. «Պարտավորություններ ֆինանս. կազմակերպությունների նկատմամբ»

	31.12.14	31.12.13
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանս. կազմակերպությունների նկատմամբ	20,443,763	11,951,850
Այլ բանկերի թղթակցային հաշիվներ	328,420	146,835
Այլ բանկերից ստացված վարկեր և ընթացիկ հաշիվներ, ժամկետային ավանդներ	1,425,783	
Այլ ֆինանսական կազմակերպությունների ընթացիկ հաշիվներ և ստացված վարկեր	2,620,693	1,861,601
Վարկեր և ավանդներ ֆինանսական կազմակերպություններից	8,807,764	9,938,703
Ռեպո համաձայնագրեր	6,507,102	0
Պարտավորություններ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով	754,001	0
Այլ պարտավորություններ	0	4,711

Ծանոթագրություն 26. «Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ»

	31.12.14	31.12.13
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	98,023,954	84,296,177
ՀՀ կառավարություն		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	1,128	0
Ստացված վարկեր	185,234	639,484
Իրավաբանական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	17,629,751	12,957,810
Ժամկետային ավանդներ	19,685,355	18,918,699
Ստորադաս փոխառություններ	7,087,003	6,225,413
Ֆիզիկական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	12,156,786	9,890,981
Ժամկետային ավանդներ	41,278,697	35,663,790

Ծանոթագրություն 27. «Այլ պարտավորություններ»

	31.12.14	31.12.13
Այլ պարտավորություններ	511,522	489,487
Պարտավորություն անձնակազմի նկատմամբ	130,448	127,974
Վճարվելիք գումարներ	171,176	171,988
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	301,624	299,962

Այլ պահուստներ	16,154	18,392
Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	150,425	120,427
Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ	4,644	4,118
Ակտիվներին վերաբերող շնորհներ	33,278	35,700
Պարտավորություններ վճարային չեկերի գծով	4,246	8,137
Այլ	1,151	2,751
Ընդամենը ոչ ֆինանսական պարտավորություններ	209,898	189,525

Ակտիվներին վերաբերող շնորհներ

<u>Հազար ՀՀ դրամ</u>	31.12.14	31.12.13
Մնացորդը հաշվետու ամսաթվի սկզբի դրությամբ	35,700	38,122
Եկամտի ճանաչում/ Ծանոթ. 9	(2,422)	(2,422)
Մնացորդը հաշվետու ամսաթվի վերջի դրությամբ	33,278	35,700

Այլ պահուստների շարժը հետևյալն է.

<u>Վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածների գծով</u>	01.01.14-31.12.14	01.01.13-31.12.13
Սկզբնական մնացորդ	18,392	9,713
Պահուստին կատարված գուտ մասհանումներ/ (վերականգնում)	(2,238)	8,679
(Դուրս գրում)/ վերադարձ		
Վերջնական մնացորդ	16,154	18,392

Այլ պահուստներում ընդգրկված են երաշխիքների գծով պահուստներ:

Ծանոթագրություն 28. «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր»

Հազար ՀՀ դրամ	Ակտիվ		Պարտավորություն	
	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	6,674,904	0	0	0
Ընդամենը	6,674,904	0	0	0

Գրավադրված արժեթղթերը այն ֆինանսական ակտիվներն են, որոնք գրավադրված են հետգնման պայմանագրերով այլ բանկերում գործընկերոջ կողմից վաճառելու և կրկին վերագրավադրելու իրավունքով:

Այս գործարքները կատարվել են ստանդարտ վարկավորման, արժեթղթերի փոխառության և վարկավորման սովորական պայմանների ներքո:

Ծանոթագրություն 29. « Ընդհանուր կապիտալ»

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 7,002,033 հազար դրամ (2013թ.՝ 4,860,033 հազար դրամ):

Համաձայն Բանկի կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 23,340 սովորական բաժնետոմսերից և 333 արտոնյալ բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը համապատասխանաբար 300,000 դրամ և 100 դրամ անվանական արժեքներով:

2014թ. դեկտեմբերի 31-ի և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են՝

Հազար ՀՀ դրամ	Վճարված բաժնետիրական կապիտալ 2014	Բաժնենասր վճարված կապիտալում 95	Վճարված բաժնետիրական կապիտալ 2013	Բաժնենասր վճարված կապիտալում 95
«Ընդվանդ գլոբալ ինվեստմենտ» ՍՊԸ	6,651,900	95	4,617,000	95
«Ընդվանդ գլոբալ ինվեստմենտ» ՍՊԸ (արտոնյալ բաժնետոմսեր)	33	-	33	-
Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի	350,100	5	243,000	5
Ընդամենը կապիտալ	7,002,033	100	4,860,033	100

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել: Սովորական բաժնետոմսերի բաժնետերերը իրավունք ունեն ստանալու շահաբաժին և մեկ ձայնի իրավունք Բանկի տարեկան և ընդհանուր ժողովներում:

Բանկի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն իրավասու մարմնի կողմից շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման դեպքում ստանալ տարեկան հաստատագրված շահութաբաժին, իրենց պատկանող արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքի 20%-ի չափով:

Բանկի բաժնետիրական կապիտալի ավելացումը իրականացվել է բաժնետերերի կողմից ՀՀ դրամով և նրանք իրավունք ունեն ստանալ շահաբաժին և բաշխել կապիտալը ՀՀ դրամով:

Բաշխման ենթակա Բանկի պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով՝ հաշվարկված համաձայն ՀՀ օրենսդրության: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ ընդհանուր բանկային ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով: Պահուստը ստեղծվել է համաձայն Բանկի կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված բաժնետիրական կապիտալի 20%-ի չափով:

Ծանոթագրություն 30. « Պարտավորվածություններ »

Բանկը մշտապես ունի վարկեր տրամադրելու պարտավորվածություններ: Այս պարտավորվածություններն իրենցից ներկայացնում են հաստատված վարկեր, վարկային քարտերի և օվերդրաֆտների գծով պարտավորվածություններ:

Բանկը տրամադրում է ֆինանսական երաշխիքներ և ակրեդիտիվներ՝ հաճախորդների պարտավորությունների կատարումը երրորդ անձանց հանդեպ երաշխավորելու նպատակով: Այս պայմանագրերն ունեն ֆիքսված ժամկետներ՝ սովորաբար մինչև մեկ տարի:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են պարտավորվածությունների չօգտագործված մասերն ըստ տեսակների:

	31.12.2014	31.12.2013
Պայմանագրային գումար		
Երաշխիքներ	1,615,421	1,839,222
Վարկային գծերի գծով պարտավորվածություններ	215,910	202,390
Վարկային քարտերի գծով պարտավորվածություններ	39,216	100,055
Օվերդրաֆտների չօգտագործված մասեր	5,194,090	5,107,364
Ակրեդիտիվներ	466,572	139,868
Ընդամենը վարկային ռիսկ պարունակող պարտավորություններ	7,531,209	7,388,899
Վարկային ռիսկ պարունակող պարտավորությունների գծով պահուստ	(16,154)	(18,392)
Ընդամենը վարկային ռիսկ պարունակող պարտավորություններ	7,515,055	7,370,507

Վարկավորելու վերը ներկայացված ընդհանուր պարտավորվածությունները չեն ենթադրում դրամական միջոցների գծով ապագա պահանջներ, քանի որ այս պարտավորվածությունները կարող է ուժը կորցնել կամ դադարել գործել նախքան ֆինանսավորվելը:

Պայմանական դեպքեր

Իրավական պարտավորություններ

Բանկի ղեկավարությունը տեղյակ չէ Բանկի դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող էական հայցերի մասին:

Հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու են սահմանել պարտավորություններ լրացուցիչ հարկերի, տույժերի կամ տուգանքների գծով խախտման ամսաթվից միայն երեք տարի անց:

Այս փաստերը Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Բանկի ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են լինել էական այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

Ծանոթագրություն 31. «Գործարքներ կապակցված կողմերի հետ»

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Բանկի կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Բանկն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկերը, ավանդները և այլն:

Հազար ՀՀ դրամ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Բաժնետերեր	Ղեկավար անձնակազմը	Բաժնետերեր	Ղեկավար անձնակազմը
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ				
Վարկի մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ, համախառն	3,913,756	216,956	540,684	191,845
հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տրամադրված վարկեր	3,457,025	465,307	7,910,722	374,764
հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում մարված վարկեր	(3,187,703)	(478,606)	(4,537,650)	(349,653)
Վարկի մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, համախառն	4,183,078	203,657	3,913,756	216,956
Արժեզրկումից պահուստ	(41,831)	(2,037)	(40,801)	(2,189)
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ	4,141,247	201,621	3,872,955	214,767
Վարկերի կորուստների գծով ծախս	(1,030)	152	(35,394)	(271)
Տոկոսային եկամուտ վարկերի գծով	374,781	15,255	193,987	19,254
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ				
Ավանդներ հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	21,477,235	108,463	34,015,654	118,372
հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ստացված ավանդներ	649,964,629	763,879	1,042,815,012	539,165
հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում վճարված ավանդներ	(644,028,030)	(726,325)	(1,055,353,431)	(549,074)
Ավանդներ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ	27,413,834	146,017	21,477,235	108,463
Տոկոսային ծախսեր ավանդների գծով	(1,228,218)	(5,499)	(1,087,247)	(6,689)
Ստացվելիք գումարներ				
Հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	40	0	3,437	-
հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ստացված	310,991	1,240	2,880	3,403
հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում վճարված	(283,862)	(1,240)	(6,277)	(3,403)
Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ	27,169	0	40	0
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն				

Միջնորդավճարների գծով եկամուտ	20,322	415	19,809	261
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժույթի փոխարկումից օգուտ	85,519	471	121,182	676
Խորհրդատվական ծախսեր	-	(28,368)	(3,651)	(33,552)
Վարձակալական վճարներ	(58,596)	-	(72,407)	-
Այլ գործառնական ծախսեր	(7,542)	(2,051)	(5,841)	(5,127)

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	31.12.2014	31.12.2013
Աշխատավարձ և այլ կարճաժամկետ վճարումներ	345,426	293,813
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	345,426	293,813

Ծանոթագրություն 32. «Ֆինանսական գործիքների իրական արժեք»

Իրական արժեքով չչափվող ֆինանսական ակտիվներ

	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Հաշվեկշռային արժեք	Հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ		
<i>Դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում</i>	28,325,239	21,103,526
<i>Պահանջներ այլ ֆինանս. կազմակերպ. նկատմամբ</i>	7,361,737	2,883,839
<i>Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ</i>	93,624,506	79,957,304
<i>Այլ ֆինանսական ակտիվներ</i>	326,615	378,988
Ֆինանսական պարտավորություններ		
<i>Պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ</i>	4,903,789	4,043,242
<i>Պարտավորություններ ֆինանս. կազմակերպ. նկատմամբ</i>	20,443,763	11,951,850
<i>Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ</i>	98,023,954	84,296,177
<i>Այլ ֆինանսական պարտավորություններ</i>	301,624	299,962

Պահանջներ և պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է հաշվետու ամսաթվի վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Փոփոխվող դրույքաչափերով գործիքների իրական արժեքը հավասար է դրանց հաշվեկշռային արժեքին: Այն միջոցների գնահատված իրական արժեքները, որոնք ունեն ֆիքսված տոկոսադրույք, սահմանվում են ելնելով ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք գեղչվում են նման վարկային ռիսկ և մարման ժամկետ ունեցող գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Իրական արժեքը մոտ է հաշվեկշռային արժեքին, քանի որ ընթացիկ տոկոսադրույքները նոր գործիքների համար արտահայտում են նախկինում տրամադրված գործիքների տոկոսադրույքները:

Այլ փոխառություններ

Ֆիքսված տոկոսադրույքներով ավանդների գնահատված իրական արժեքը սահմանվում է, ելնելով ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք գեղչվում են նմանատիպ մարման ժամկետ ունեցող նոր պարտքային գործիքների տոկոսադրույքներով: Իրական արժեքը մոտ է հաշվեկշռային արժեքին, քանի որ ընթացիկ տոկոսադրույքները նոր գործիքների համար արտահայտում են նախկինում տրամադրված գործիքների տոկոսադրույքները:

32.1 Իրական արժեքի հիերարխիա

Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝ Մակարդակ 1 - նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված): Մակարդակ 2- Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են թե ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՛ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող): Մակարդակ 3 - ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ)

	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Ֆինանսական ակտիվներ						
<i>Առևտրային արժեթղթեր</i>		0			268,904	
<i>Վաճառքի համար մատչելի ներդրումներ</i>		1,145,096			7,097,050	
<i>ՏՀԶԿ երկրների չգնանշվող սեփական կապիտալի ներդրումներ</i>		516,820			371,136	
<i>Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր</i>		6,674,904				
<i>Ածանցյալ ֆինանսական ակտիվ</i>		0			0	
Ֆինանսական պարտավորություններ						
<i>Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ</i>		180,645			0	
<i>Չուտ իրական արժեք</i>		8,156,175			7,737,090	

Իրական արժեքի չափման մեթոդները և գնահատման մեխանիզմը չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ:

Չգնանշվող ՀՀ բաժնեմասային արժեթղթեր

Բանկի ներդրումների իրական արժեքը չգնանշվող ՀՀ բաժնեմասային արժեթղթերում չի կարող չափվել և հետևաբար դուրս է մնում այս բացահայտումից:

Ծանոթագրություն 33. «Ֆինանսական ռիսկերի վերաբերյալ նվազագույն բացահայտումներ»

Ռիսկերի կառավարումն էական գործոն է բանկային ոլորտի համար և Բանկի գործառնությունների կարևոր տարր է: Հիմնական ռիսկերը, որոնց ենթարկված է Բանկը, ներառում են տոկոսադրույքի և արտարժույթի ռիսկերն ընդգրկող շուկայական ռիսկը, ինչպես նաև վարկային և իրացվելիության ռիսկերը: Բանկի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկված է Բանկը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը, ընդհանուր սկզբունքները և մոտեցումները սահմանվում են Բանկի Խորհրդի կողմից: Բանկում ռիսկերի կառավարումը կազմակերպում և կորորդինացնում է Գործադիր տնօրենը: Ռիսկերի կառավարման վարչությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման և հսկողության համար:

33.1 Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը Բանկի կողմից տրամադրված ֆինանսավորումների կորստի հավանականությունն է, որն արտահայտվում է վարկառուի կողմից Բանկի հանդեպ ստանձնված պայմանագրային պարտավորությունների լրիվ կամ մասնակիորեն չկատարմամբ:

Բանկում վարկային ռիսկը կառավարում է համաձայն Բանկի վարկային քաղաքականության , առևտրային ֆինանսավորման, անհատական վարկերի տրամադրման ,վճարային քարտերի տրամադրման, վերաթողարկման և հսկման , Ժամկետանց ակտիվների կառավարման, բանկերի և ոչ բանկ ֆինանսական հաստատությունների առանց ապահովության վարկային ռիսկերի առավելագույն չափի գնահատման, ֆինանսական շուկաներում գործառնությունների իրականացման կարգերի և ոլորտը կարգավորող այլ ներքին իրավական ակտերի:

Ռիսկերի կառավարման վարչության կողմից կատարվում է վարկային պորտֆելի օրական կտրվածքով մոնիտորինգ, կառուցված շարքերի հիման վրա վարկային պորտֆելի դինամիկայի հաշվարկ և պորտֆելի որակի վերլուծություն ըստ պրոդուկտների ու մասնաճյուղերի , ինչի հիման վրա կատարվում են վարկային պորտֆելի որակական ցուցանիշների կանխատեսումներ:

Աշխարհագրական կենտրոնացումներ

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի՝ պարտքային ռիսկերի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով՝ դասակարգված ըստ աշխարհագրական սեգմենտների:

Հոդվածի անվանումը	ՀՀ	ՏՀԶԿ երկրներ	Ոչ ՏՀԶԿ երկրներ	Ընդամենը
Ակտիվներ				
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	25,876,999	1,500,697	947,543	28,325,239
Առևտրային արժեթղթեր	0			0
Պահանջներ ֆին. կազմ. նկատմամբ	6,344,499	876,929	140,309	7,361,737
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ				0

Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	90,098,024	23,963	3,502,519	93,624,506
Վաճառքի համար մատչելի ֆին. ակտիվներ	1,943,118			1,943,118
Հետզման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	6,674,904			6,674,904
Այլ ֆինանսական ակտիվներ	146,835	152,559	27,221	326,615
2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	131,084,379	2,554,148	4,617,592	138,256,119
2013 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	101,177,790	6,239,041	4,720,139	112,136,970

Տնտեսության ճյուղեր

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս 2014թ. դեկտեմբերի 31-ի և 2013 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի վարկային ռիսկերի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով՝ դասակարգված ըստ արդյունաբերության ճյուղերի.

Չափաբան	Ֆինանսական կազմակերպություններ	Արդյունաբերություն	Գյուղատնտեսություն	Առևտուր	Շինարարություն	Պետական հատված	Սպառողական ոլորտ(այդ թվում հիփոթեք)	Սպասարկման ոլորտ	Այլ	Ընդամենը
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՉԴ ԿԲ-ում	28,325,239									28,325,239
Առևտրային արժեթղթեր						0				0
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	7,361,737									7,361,737
Ածանցյալ գործիքներ	0									0
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ		9,352,775	2,229,016	11,100,509	7,494,471		51,725,198	6,271,938	5,450,599	93,624,506
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	895,183	-	-			1,047,935			0	1,943,118
Հետզման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր						6,674,904				6,674,904
Այլ ֆինանսական ակտիվներ	39,017							287,598		326,615
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	36,621,176	9,352,775	2,229,016	11,100,509	7,494,471	7,722,839	51,725,198	6,271,938	5,738,198	138,256,119
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	24,468,478	5,801,087	1,911,052	8,098,992	8,216,638	7,209,896	42,975,248	8,673,030	4,782,550	112,136,970

Գրավ

Բանկը կիրառում է բազմաթիվ միջոցներ վարկային ռիսկը զսպելու համար: Համընդհանուր գործելակերպ է հանդիսանում և հիմնական միջոցներից մեկն է համարվում տրամադրված դրամական միջոցների դիմաց գրավ վերցնելը: Բանկը կանոններ է սահմանում գրավի հատուկ տեսակների ընդունելի լինելու կամ

ռիսկերի զսպման վերաբերյալ: Վարկերի և փոխատվությունների համար գրավի հիմնական տեսակներն են.

- Հիպոթեքային պայմանագրերով գրավադրվող անշարժ գույքը,
- Կազմակերպությունների գործառնական ակտիվները՝ շենքերը, պաշարները և դեբիտորական պարտքերը,
- Ֆինանսական գործիքները՝ պարտքային և բաժնային արժեթղթերը:

Կորպորատիվ կազմակերպությունների երկարաժամկետ ֆինանսավորումը և վարկավորումը հիմնականում ապահովվում են, ֆիզիկական անձանց գծով վերաձևակերպվող վարկային գծերը հիմնականում չեն ապահովվում: Ի լրումն, վարկային կորուստը նվազագույնի հասցնելու համար Բանկը վարկառուից լրացուցիչ երաշխիքներ է պահանջում, հենց որ համապատասխան անհատական վարկերի և փոխատվությունների արժեգրկման հատկանիշներ են նկատվում:

Վարկեր և փոխատվություններից տարբեր ֆինանսական ակտիվներ ապահովող գրավները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով: Հիմնականում ֆինանսական հաստատություններին, հատկապես բանկերին, վարկեր և կանխավճարներ տրամադրելու համար գրավներ չեն պահանջվում: Բացառություն են կազմում այն գրավները, որոնք ձեռք են բերվել ըստ հետգնման պայմանագրերի և արժեթղթերի փոխառության գործարքներից: Պարտատոմսերը և այլ պարտքային արժեթղթերը հիմնականում չեն ապահովվում:

Համախառն վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

Հազար ՀՀ դրամ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Անշարժ գույք	55,692,182	29,077,097
Ոսկի	10,092,218	9,219,011
Կազմակերպությունների երաշխիքներ	4,006,529	24,859,710
Մեքենաներ	4,353,145	3,545,354
Կանխիկ դրամական միջոցներ	6,511,505	6,055,746
Պաշարներ	2,309,944	1,478,819
Սարքավորումներ	633,732	300,078
Պետական Արժեթղթեր		
Այլ		
Ապահովվածություն չունեցող	5,653,195	4,817,760
Ընդամենը վարկեր և փոխատվություններ հաճախորդներին (համախառն)	97,334,297	83,214,823

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա ըստ տրամադրված վարկերի ամսաթվի:

33.1.1 Արժեգրկում և պահուստավորման քաղաքականություն

Վարկերի արժեգրկման գնահատման հիմնական հատկանիշներն են մայր գումարի կամ տոկոսների վճարումների 90 օրից ավել ուշացումները, վարկառուների դրամական հոսքերի հետ կապված

դժվարությունները, վարկային ռեյտինգների նվազումները, պայմանագրերի նախնական պայմանների խախտումները: Բանկը արժեզրկման գնահատումը կատարում է անհատապես և խմբային եղանակով:

Արժեզրկման անհատական գնահատում

Բանկը որոշում է յուրաքանչյուր անհատապես նշանակալի վարկի կամ փոխատվության համապատասխան պահուստի չափը անհատական հիմքով: Պահուստի գումարի որոշման ժամանակ հաշվի առնվող գործոններից են վարկառուի բիզնես ծրագրի վստահելիությունը, ֆինանսական դժվարությունները հաղթահարելու կարողությունը, ծրագրված հասույթները և սպասվող շահաբաժինների վճարումները անվճարունակության դեպքում, այլ ֆինանսական օգնության հնարավորությունը, գրավի իրացվելի արժեքը, սպասվող դրամական հոսքերի ժամկետները: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե չկանխատեսված հանգամանքները չեն պահանջում հատուկ ուշադրություն:

Արժեզրկման խմբային գնահատում

Խմբային գնահատումը կատարվում է ոչ նշանակալի վարկերի գծով (ներառյալ կրեդիտ քարտերը, հիպոթեքները և չապահովված սպառողական վարկերը), ինչպես նաև անհատապես նշանակալի վարկերի և փոխատվությունների գծով, որոնց համար դեռ չկան արժեզրկման ակնհայտ հատկանիշներ: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ դասակարգված յուրաքանչյուր խմբի համար առանձին:

Խմբային գնահատումը հաշվի է առնում այն արժեզրկման գումարը, որը հնարավոր է առաջանալ պորտֆելում, նույնիսկ եթե անհատական գնահատման մեջ արժեզրկման օբյեկտիվ վկայություն չկա: Արժեզրկման կորուստները գնահատվում են հաշվի առնելով հետևյալ տեղեկատվությունը՝ պորտֆելում կորուստների պատմությունը, ընթացիկ տնտեսական իրավիճակը, կորուստն առաջանալու և անհատապես բացահայտվելու մոտավոր ժամկետը, արժեզրկման դեպքում սպասվող վճարումները:

Ֆինանսական երաշխիքների և ակրեդիտիվների արժեզրկման գնահատումը և պահուստավորումն իրականացվում է նույն կերպ՝ ինչ վարկերինը:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է խմբային մեթոդով գնահատված վարկային պորտֆելի ըստ ճյուղայնության արժեզրկման գործակիցները՝ հիմնված բանկի կորուստների պատմության վրա:

	31.12.2014	31.12.2013
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	%	%
Արդյունաբերություն	0.4	0.2
Գյուղատնտեսություն	1.1	0.7
Շինարարություն	0.0	1.3
Տրանսպորտ	0.0	1.1
Առևտուր	0.7	0.4
Հանրային սնունդ և սպասարկում	1.5	2.3
Սպառողական	0.5	0.4
Հիփոթեքային	0.9	1.1
Այլ ոլորտներ	0.3	0.2

Ժամկետանց, բայց անհատորեն չարժեզրկված վարկեր

Ժամկետանց են համարվում այն վարկերը և փոխատվությունները, որոնց գծով առկա են մի քանի օրյա չվճարումներ: Ժամկետանց վարկերի հիմնական մասն արժեզրկված չեն: Ժամկետանց, բայց չարժեզրկված վարկերի ժամկետանց օրերի վերլուծությունն ըստ դասերի ներկայացվում է հետևյալ աղյուսակում:

Հազար ՀՀ դրամ					31.12.2014
	Մինչև 30 օր	31 –ից 60 օր	61 –ից 90 օր	91 օրից ավել	Ընդամենը
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ					
Արդյունաբերություն	10597	20257	0	71920	102,774
Գյուղատնտեսություն	36129	20805	7579	32409	96,923
Շինարարություն	8057	118647	0	801793	928,497
Առևտուր	51109	23291	4806	69681	148,887
Տրանսպորտ և կապ					0
Սպառողական	279221	181907	129507	326234	916,870
Հիփոթեքային	708764	98538	4141	267808	1,079,251
Սպասարկման ոլորտ					0
Այլ ոլորտներ	29920	140553	0	31422	201,895
Ընդամենը	1,123,798	603,998	146,033	1,601,266	3,475,095

Հազար ՀՀ դրամ					31.12.2013
	Մինչև 30 օր	31 –ից 60 օր	61 –ից 90 օր	91 օրից ավել	Ընդամենը
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ					
Արդյունաբերություն	0	0	6164	14139	20,303
Գյուղատնտեսություն	3208	0	6887	21215	31,310
Շինարարություն	519	0	0	0	519
Առևտուր	13019	0	0	41494	54,513
Տրանսպորտ և կապ	10419	0	0	0	10,419
Սպառողական	190443	33604	41792	62640	328,479
Հիփոթեքային	49214	10689	0	54764	114,667
Սպասարկման ոլորտ					0
Այլ ոլորտներ	0	0	0	33660	33,660
Ընդամենը	266,822	44,293	54,843	227,912	593,870

33.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը հավանականությունն է, որ Բանկը վնասներ կկրի շուկայական տատանումների հետևանքով, մասնավորապես արտարժույթային փոխարժեքի և ֆինանսական գործիքների գների տատանումներից: Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը:

Շուկայական ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ ձևավորված պայմանները կամ սպասումները փոփոխվում են Բանկի կողմից կատարված ենթադրություններին հակառակ ուղղությամբ, այդ թվում՝ կապված արտարժույթային դիրքի, միջոցների ներգրավման կամ տրամադրման տոկոսադրույքների հետ, որի հետևանքով ձևավորվում է վնաս:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն են, որոնք թույլ կտան պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանը

ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Արտարժութային ռիսկ

Արտարժութային և թանկարժեք մետաղների ռիսկը կապված է արտարժույթի փոխարժեքների և թանկարժեք մետաղների գների փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների գների տատանման արդյունքում Բանկում արտարժութային բաց դիրքերի առկայության դեպքում դրամական կորուստների հավանակության հետ: Օրական կտրվածքով կատարվում է արտարժութային կուրսերի մոնիթորինգ, որի հիման վրա ամսվա վերջին գալիք ամսվա համար կատարվում է արտարժութային փոխարժեքների կանխատեսում: Բանկն իր արտարժութային դիրքը կառավարում է օրական կտրվածքով՝ Բանկում գործող ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, համապարփակ ֆինանսական աղբյուրների մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ) և կապիտալի վրա (կապված կապիտալի գործիքների իրական արժեքի փոփոխմամբ): Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

Հազար ՀՀ դրամ	31.12.2014			31.12.2013		
	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Ազդեցությունը կապիտալի վրա	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Ազդեցությունը կապիտալի վրա
Արտարժույթ						
ԱՄՆ դոլար	+5	(38,098)	(30,479)	+5	3,763	3,010
ԱՄՆ դոլար	-5	38,098	30,479	-5	(3,763)	(3,010)
Եվրո	+8	(2,287)	(1,830)	+8	(690)	(552)
Եվրո	-8	2,287	1,830	-8	690	552

Բանկն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ : Արտարժույթի ռիսկն առաջանում է, երբ արտարժույթով արտահայտված փաստացի կամ կանխատեսված ակտիվները գերազանցում են կամ պակաս են նույն արտարժույթով արտահայտված պարտավորություններին:

Բանկի ակտիվների և պարտավորությունների կառուցվածքը ըստ արժույթների ունի հետևյալ տեսքը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

	ՀՀ դրամ	I խմբի արտարժույթ*	II խմբի արտարժույթ**	Ընդամենը
Ակտիվներ				
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	20,679,477	6,653,958	991,804	28,325,239
Առևտրային արժեթղթեր	0	0	0	0
Պահանջներ ֆին. կազմ. նկատմամբ	1,696,230	5,313,543	351,964	7,361,737
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	0	0	0	0
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	24,562,128	69,062,331	47	93,624,506
Վաճառքի համար մատչելի ֆին. ակտիվներ	1,943,118	0	0	1,943,118
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	6,674,904			6,674,904
Այլ ֆինանսական ակտիվներ	135,354	191,209	52	326,615
Ընդամենը	55,691,211	81,221,041	1,343,867	138,256,119
Պարտավորություններ				
Պարտավորություններ ՀՀ ԿԲ նկատմամբ	4,903,789	0	0	4,903,789
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	16,655,141	3,367,121	421,501	20,443,763
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	21,691,211	75,763,725	569,018	98,023,954
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	180,645			180,645
Այլ ֆինանսական պարտավորություններ	274,013	27,559	52	301,624
Ընդամենը պարտավորություններ	43,704,799	79,158,405	990,571	123,853,775
Չուտ դիրք առ 31 դեկտեմբերի 2014թ.	11,986,412	2,062,636	353,296	14,402,344
Չուտ դիրք առ 31 դեկտեմբերի 2013թ.	10,160,738	417,366	967,635	11,545,739
Վարկային ռիսկ պարունակող պարտավորություններ 2014թ. դեկտեմբերի 31-ին	3,392,751	4,081,600	40,703	7,515,055
Վարկային ռիսկ պարունակող պարտավորություններ 2013թ. դեկտեմբերի 31-ին	3,570,369	3,800,138	0	7,370,507

* «I խմբի արտարժույթի» կազմում ներառված են հետևյալ արժույթները՝ ԱՄՆ դոլար, եվրո, բրիտանական ֆունտ, շվեյցարական ֆրանկ, շվեդական կրոնա, կանադական դոլար, ճապոնական յեն և ավստրալական դոլար:

** «II խմբի արտարժույթի» կազմում ներառված են հետևյալ արժույթները՝ Ռ-Ռ ռուբլի, ուկրաինական գրիվնա, բելոռուսական ռուբլի:

Տոկոսադրույթի ռիսկ

33.2.1 Տոկոսադրույթի ռիսկ - Առևտրային պորտֆել

Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ռիսկը հաշվարկելու համար Բանկի կողմից կիրառվում են Բազել 2-ի տոկոսադրույքի ռիսկի հաշվարկման մեթոդները և մոտեցումները: Համաձայն դրանց տոկոսադրույքի ռիսկը սահմանվում է որպես տոկոսադրույքի հատուկ և ընդհանուր ռիսկերի հանրագումար:

Տոկոսադրույքի ռիսկի հաշվարկման նպատակով պարտքային արժեթղթերի դիրքերը հաշվարկվում են ներքոհիշյալ սկզբունքներով խմբավորված պարտքային արժեթղթերի նկատմամբ: Միևնույն դիրքերի հաշվարկին մասնակցող պարտքային արժեթղթերը պետք է.

- թողարկված լինեն միևնույն անձի կողմից, և
- արտահայտված լինեն միևնույն արժույթով, և
- ունենան միևնույն եկամտաբերությունը, կամ եկամտաբերությունների միջև տարբերությունը չպետք է գերազանցի 0.2 տոկոսային կետը:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է Բանկի առևտրային պորտֆելի տոկոսադրույքի ռիսկը.

Հազար ՀՀ դրամ	Հատուկ ռիսկ	Ընդհանուր ռիսկ	Ընդամենը առևտրային արժեթղթերի ռիսկ
2014թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	26,230	75,244	101,474
2013թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	18,991	28,644	47,635

33.2.2 Տոկոսադրույքի ռիսկ – Ոչ առևտրային

Տոկոսադրույքի ռիսկը պայմանավորված է տոկոսադրույքների փոփոխման արդյունքում ֆինանսական գործիքների արժեքի փոփոխմամբ:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Բանկի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգալունությունը տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով:

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգալունությունը տոկոսադրույքներում ենթադրվող փոփոխությունների ազդեցությունն է հաշվետու ժամանակաշրջանի զուտ տոկոսային եկամտի վրա՝ 31.12.14թ. դրությամբ հաշվեկշռում հաշվառվող տատանվող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով: Կապիտալի զգալունությունը հաշվարկվում է վերագնահատելով վաճառքի համար մատչելի հաստատուն տոկոսադրույքով ակտիվները 31.12.14թ. դրությամբ՝ հիմք ընդունելով տոկոսադրույքների ենթադրվող փոփոխությունները:

Կապիտալի զգալունությունը վերլուծվում է ըստ ակտիվի իրացման ժամկետների: Կապիտալի ընդհանուր զգալունությունը հիմնված է այն ենթադրության վրա, որ եկամտաբերության կորում կան զուգահեռ փոփոխություններ:

Հազար ՀՀ դրամ

31.12.14

Կապիտալի զգալունություն

Արժույթ	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Զուտ տոկոսային եկամտի զգալունություն	Մինչև 6 ամիս	6 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը

Հազար ՀՀ դրամ

31.12.14

Կապիտալի զգայունություն

Արժույթ	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Զուտ տոկոսային եկամտի զգայունություն	Մինչև 6 ամիս	6 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
ՀՀ դրամ	+1%	-	10,479	-	972	-	11,451
ԱՄՆ դոլար	+1%	-	-	-	-	-	0
ՀՀ դրամ	-1%	-	(10,479)	-	(972)	-	(11,451)
ԱՄՆ դոլար	-1%	-	-	-	-	-	0

Հազար ՀՀ դրամ

31.12.13

Կապիտալի զգայունություն

Արժույթ	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Զուտ տոկոսային եկամտի զգայունություն	Մինչև 6 ամիս	6 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
ՀՀ դրամ	+1%	2,148	1,473	2,540	38,254	27,684	72,099
ԱՄՆ դոլար	+1%	541	0	1,019	0	0	1,560
ՀՀ դրամ	-1%	(2,148)	(1,473)	(2,540)	(38,254)	(27,684)	(72,099)
ԱՄՆ դոլար	-1%	(541)	0	(1,019)	0	0	(1,560)

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը բաժնետերերի, հաճախորդների և Բանկի նկատմամբ պահանջներ ունեցող այլ անձանց շահերի վրա բացասական ազդեցություն առաջանալու հնարավորությունն է, որը ծագում է Բանկի կողմից ընթացիկ վճարային պարտավորությունները ժամանակին և տնտեսապես արդարացված ծախսերի միջոցով կատարելու անկարողության հետևանքով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում:

Իրացվելիության ռիսկի կառավարման նպատակով իրականացվում է ակտիվների և պարտավորությունների ժամկետային կառուցվածքի՝ իրացվելիության ճեղքվածքի (liquidity GAP), ամենօրյա քննարկում, ինչպես նաև բարձր իրացվելի գործիքներում ներդրումների տեսակարար կշռի նկատմամբ հսկողություն: Իրացվելիության ռիսկի զսպման նպատակով ԱՊԿԿ-ին ռիսկերի կառավարման վարչության կողմից ամսական կտրվածքով ներկայացվում է վերլուծություն Բանկի սպասվելիք մարումների, տրամադրվելիք միջոցների և դիրքի վերաբերյալ:

Ակտիվների և պարտավորությունների պայմանագրային ժամկետայնության վերլուծությունը ներկայացված է հետևյալ աղյուսակում:

31.12.2014

ԱԿՏԻՎՆԵՐ

	Ցպահանջ և միջև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթա- հանրա-գումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթա-հանրա- գումար	Ընդամենը
Դրամական միջոցներ և մնացորդներ ԶԶ կենտրոնական բանկում	28,325,239	-	-	28,325,239	-	-	0	28,325,239
Առևտրային արժեթղթեր				0			0	0
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,813,027	1,166,819	3,198,284	6,178,130	109,424	1,074,183	1,183,607	7,361,737
Ածանցյալ ֆինանսական ակտիվ	-	-	-	0	-	-	0	0
Վարկեր և փոխառություններ հաճախորդներին	6,538,434	5,619,742	26,014,800	38,172,976	25,119,835	30,331,695	55,451,530	93,624,506
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	0	442,007	599,273	1,041,280	97,130	804,708	901,838	1,943,118
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր			186,572	186,572	6,488,332		6,488,332	6,674,904
Այլ ֆինանսական ակտիվներ	326,615	-	-	326,615	-	-	0	326,615
	37,003,315	7,228,568	29,998,929	74,230,812	31,814,721	32,210,586	64,025,307	138,256,119
Պարտավորություններ								
Պարտավորություններ ԶԶ ԿԲ-ի նկատմամբ	107,064		2,060,700	2,167,764	2,736,025	-	2,736,025	4,903,789
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	11,255,303	2,709,156	1,549,617	15,514,076	3,893,987	1,035,700	4,929,687	20,443,763
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	38,719,980	9,517,973	38,280,332	86,518,285	11,402,764	102,905	11,505,669	98,023,954
Ածանցյալ գործիքներ	180,645			180,645			0	180,645
Այլ պարտավորություններ	301,624			301,624				301,624
	50,564,616	12,227,129	41,890,649	104,682,394	18,032,776	1,138,605	19,171,381	123,853,775
Զուտ Դիրք	-13,561,301	-4,998,561	-11,891,720	-30,451,582	13,781,945	31,071,981	44,853,926	
Կուտակված ճեղքվածք		-18,559,862	-30,451,582		-16,669,637	14,402,344		

31.12.2013

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթա- հանրա-գումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթա-հանրա- գումար	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	21,103,526			21,103,526			0	21,103,526
Թանկարժեք մետաղներ				0			0	0
Առևտրային արժեթղթեր			657	657	74,623	193,624	268,247	268,904
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	120,720	1,514,878	57051	1,692,649	344132	847,058	1,191,190	2,883,839
Ածանցյալ ֆինանսական ակտիվ				0			0	0
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին	5,161,061	4,322,407	21,968,498	31,451,966	23,397,932	25,107,406	48,505,338	79,957,304
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	59,743	14,814	428,707	503,264	3,825,431	3,215,714	7,041,145	7,544,409
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր				0			0	0
Այլ ֆինանսական ակտիվներ	378,988			378,988			0	378,988
				0			0	0
				0			0	0
Պարտավորություններ								
Պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ	13,610	612,515		626,125	3,417,117		3,417,117	4,043,242
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,865,991	444,324	6,021,095	8,331,410	2,785,134	835,306	3,620,440	11,951,850
Ածանցյալ ֆինանսական պարտավորություն				0			0	0
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	28,513,733	8,654,881	35,599,292	72,767,906	11,444,030	84,241	11,528,271	84,296,177
Այլ պարտավորություններ	299,962			299,962			0	0
Զուտ Դիրք	-3,869,258	-3,859,621	-19,165,474	-26,894,353	9,995,837	28,444,255	38,440,092	
Կուտակված ճեղքվածք		-7,728,879	-26,894,353		-16,898,516	11,545,739		

Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը Բանկում բանկային գործարքների սահմանված կարգի և ընթացակարգերի՝ գործող օրենսդրությանը անհամապատասխանության կամ դրանց խախտման, Բանկի աշխատակիցների անիրագրելության կամ սխալների, Բանկի կողմից կիրառվող տեղեկատվական, տեխնոլոգիական և այլ համակարգերի ֆունկցիոնալ հնարավորությունների /բնորոշիչների/ անբավարարության հետևանքով վնասների առաջացման ռիսկն է:

Գործառնական ռիսկերի կառավարման բարձրագույն մարմինը Բանկի Վարչությունն է, որը պատասխանատու է գործառնական ռիսկերի վերահսկման համար: Գործառնական ռիսկն իր մեջ ներառում է թե արտաքին, թե ներքին ռիսկեր: Գործառնական ռիսկերի կառավարումն իրականացվում է հստակ և փաստաթղթավորված կերպով նկարագրված բոլոր բիզնես գործընթացների, վերջիններիս գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերի, բոլոր գործընթացների և գործառնությունների համար սահմանված համապատասխան սահմանաչափերի, Բանկի կողմից իրականացվող ցանկացած գործարքի ընթացքում կրկնակի ստուգման սկզբունքի միջոցով: Գործառնական ռիսկի առավել արդիական տեսակների կառավարումը նկարագրված է ստորև.

1. Հաշվապահական հաշվառման ռիսկ - Բանկի ֆինանսական տեղեկատվությունը կարող է սխալ մուտքագրվել, հաշվեգրվել, հաշվարկվել, բաց թողնվել, անտեսվել կամ սխալ կերպով ներկայացվել: Ցանկացած նման բացթողում կարող է Բանկի համար էական բացասական հետևանքներ ունենալ: Հետևյալ ռիսկից խուսափելու համար պարտադիր է ղեկավարվել Բանկի Հաշվապահական Հաշվառման Քաղաքականության մեջ ամրագրված հիմնական սկզբունքներով:

2. Տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) հետ առնչվող ռիսկերը կառավարվում են SS և ավտոմատացման վարչության կողմից համաձայն Համակարգչային աշխատատեղերում ծրագրային լիազորությունների, մուտքային անունների և գաղտնաբառերի տրամադրման և օգտագործման հրահանգի, Տեղեկատվական Տեխնոլոգիաների անվտանգության քաղաքականության և այլ հրահանգների միջոցով:

3. Օրենսդրական և նորմատիվային ռիսկ- Բանկն իր գործունեության ընթացքում կարող է կատարել օրենսդրական և նորմատիվային խախտումներ, որոնց արդյունքում կարող է առաջանալ վնաս կամ Բանկի նկատմամբ կարող են կիրառվել պատժամիջոցներ: Տվյալ ռիսկը կառավարելու համար պատասխանատու է Բանկի Վարչությունը իրեն վերապահված լիազորությունների սահմաններում:

4. Իրավական ռիսկ- Բանկի փոխհարաբերությունները երրորդ անձանց հետ կարգավորող փաստաթղթերում Բանկի իրավունքները կամ պարտականությունները կարող են լինել ոչ համարժեք կամ թերի, ինչի հետևանքով Բանկը չի կարողանա հաջողությամբ պաշտպանել իր դիրքերը վիճարկելի իրավիճակներում: Այսպիսի իրավիճակներից խուսափելու նպատակով Բանկի բոլոր ստանդարտ պայմանագրերի օրինակելի ձևերը մշակվում են Բանկի իրավաբանական վարչության կողմից համապատասխան ստորաբաժանման հետ համագործակցության միջոցով և հաստատվում են Բանկի Վարչության կողմից: Բանկի առօրյա գործունեության ընթացքում Բանկի և երրորդ անձանց հետ փոխհարաբերությունները կարգավորող ոչ ստանդարտ պայմանագրերի կիրառումը թույլատրվում է միայն այդ պայմանագրերի վերաբերյալ Բանկի իրավաբանական վարչության կողմից եզրակացության առկայության դեպքում:

5.Գործընթացի ռիսկ – Գործընթացի ռիսկի զսպման մեխանիզմներ են.

5.1Իրլոբ բիզնես գործընթացների կանոնակարգումը ներքին իրավական ակտերի միջոցով,

5.2Բանկի ակտիվների և առավել կարևոր փաստաթղթերի (այդ թվում՝ վարկային պայմանագիր) ֆիզիկական պաշտպանվածությունը,

5.3սահմանաչափերի սահմանումը և պահպանումը,

5.4գույքի և գրառումների համատեղ պահպանումը,

5.5տվյալների գրանցամատյանների կիրառումը և արխիվացումը,

5.6գործընթացների ժամանակ երկու աչքի սկզբունքի կիրառումը:

Ներքին աուդիտը պարբերաբար տալիս է Բանկի ներքին հսկողության համակարգի արդյունավետության և Բանկի ռիսկերին համարժեք լինելու գնահատական և հսկողություն է իրականացնում Բանկի գործունեության և գործառնական ռիսկերի նկատմամբ: Բանկի ստանդարտների համապատասխանությունը ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքերը քննարկվում են Բանկի ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Դիտարկումների սամփոփագրերը ներկայացվում են Խորհրդին:

Ծանոթագրություն 34. «Կապիտալ և կապիտալի համարժեքություն»

Բանկը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք բանկային գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Բանկի կապիտալի համարժեքությունն այլ միջոցների հետ մեկտեղ վերահսկվում է նաև օգտագործելով Բանկային Վերահսկողություն Բազելյան Հանձնաժողովի, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնները և նորմատիվները:

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Բանկի կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Բանկը պահպանում է ամուր վարկային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու համար:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Բանկը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է 12%:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, էմիսիոն եկամուտը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է երկրորդային կապիտալը, որը ընդգրկում է վերագնահատման պահուստները:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման:

Ժամանակաշրջանի ընթացքում Բանկը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ պահանջները:

2009թ. հունվարի 1-ից ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանվել է ընդհանուր կապիտալի նվազագույն չափ 5,000,000 ՀՀ դրամ գումարով: